



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ**

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԻՆ
(մարտի 21, 2018 թ.)**



Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,
Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս,
Մեծարգո Նախագահ Արցախի
Հանրապետության,
Համագումարի հարգարժան
մասնակիցներ,
Մայր Աթոռ Ս. Էջմիածնից սիրով
ողջունում ենք ամենքիդ՝ Մայիսյան
հերոսամարտերի եւ Հայաստանի
Հանրապետության 100-րդ տարե-
դարձին նվիրված համաժողովի

գումարման առիթով:
Առանձնակի գոհունակությամբ
ենք անդրադառնում, որ մեր հոգե-
ւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կի-
լիկիո Կաթողիկոսի նախանձախնդ-
րությամբ այսօր մեկտեղվել եք Ան-
թիլիասի մայրավանքում՝ քննարկե-
լու եւ արժեւորելու հայրենի պետա-
կանության վերակերտման պատ-
մական հիշատակները: Մայր հայ-
րենիքում եւ Սփյուռքում այս նշա-
նակալի իրադարձության 100-ա-

մյակին նվիրված բոլոր տոնախմ-
բությունները գալիս են մեզ հիշեց-
նելու, որ հակառակ դժվարին պատ-
մական անցյալի՝ մեր ժողովուրդը
երբեք չի դադարել պայքարել ազա-
տության համար, որը մարդկանց
տրված աստվածային շնորհ է:
100-ամյակ առաջ մեր անկախ
պետականությունը վերահաս-
տատվեց այնպիսի դժվարին մի
ժամանակահատվածում, երբ աշ-
խարհը փոթորկած Առաջին աշ-
խարհամարտի պայմաններում
Օսմանյան Թուրքիայում իրակա-
նացվում էր Հայոց ցեղասպանու-
թյունը, իսկ Արեւելյան Հայաստան
ներխուժած թուրքական զորքերը
սպառնում էին մեր ժողովրդի գո-
յությունը: Օրհասական պահին
նուրբ կանգնեց ժողովուրդը. գին-
վորական, գյուղացի, հոգեւորա-
կան, մահն անտեսելով, մարտի
դաշտ էին գնում անդադար հնչող
զանգերի ներքո եկեղեցիների եւ ի-
րենց հավատավոր հոգիներում՝
հայրենիքը պաշտպանելու կոչը
Գեւորգ Ե Սուրենյանց Կաթողիկո-
սի: Մայիսյան հերոսամարտերը
վկայությունը եղան մեր ժողովրդի
քաջարի ոգու եւ միասնության, որ
մի կողմ դնելով կուսակցական ու
քաղաքական տարածայնություն-
ները՝ բռնուցքվեց հանուն նոր ծն-
վելիք Հայաստանի անկախ Հան-
րապետության: Ազգային պետա-
կանությունը՝ իբրեւ մեր ժողովրդի

նվիրական ձգտումների իրագոր-
ծում, օրհնվեց Մայր Աթոռ Ս. Էջ-
միածնում՝ Հանրապետության
դրոշի եւ բանակի օրհնությամբ,
որն աղոթալի խոսքով այսպես է
բնորոշել Գեւորգ Ե Հայրապետը.
«Ի սրտե փափագող իմ սիրեցյալ
ազգիս երջանկության եւ իմ պան-
ծալի հայրենիքի եւ պետության
բարգավաճման եւ հարատեւու-
թյան համար... Հայոց Մայր Աթոռի
հնադարյան Ս. Էջմիածնի տաճա-
րում անձամբ մատուցեցի Ս. Պա-
տարագ, օրհնեցի եւ սրբազործեցի
Անկախ, Միացյալ եւ Մեծ Հայաս-
տանի տոնը...»:
Պետականության վերականգ-
նումը դարձավ մղիչ ու ոգեւորիչ
ուժ, վստահություն ներշնչեց մեր
ժողովրդին իր գալիքի հանդեպ:
Այն եղավ նաեւ վկայություն մեր
ժողովրդի նվիրական ու վեհ ձգ-
տումների՝ կառուցելու ժողովրդա-
վարական, իրավական ու ընկերա-
յին պետություն, ազատ ու արդար
հասարակական կյանք: Այս ա-
վանդները, հայրենիքի հանդեպ սե-
րը առաջնորդեցին մեր ժողովրդին՝
1991 թվականին հռչակելու ազգա-
յին պետականության անկախու-
թյունը, սատարելու արցախահա-
յության ազատ ապրելու իրավուն-
քի իրացմանը, պաշտպանելու մեր
հայրենիքի սահմանները թշնա-
մյաց ոտնձգություններից:
Մայիսյան հերոսամարտերի եւ

Հայաստանի Առաջին Հանրապե-
տության հռչակման հոբելյաններն
այսօր ոգեշնչման առիթ ու իրավե-
ր են աշխարհասփյուռ մեր ժողով-
րին՝ միասնական ջանքեր բերելու
հայրենի մեր պետականության գո-
րացման, Արցախյան խնդրի խա-
ղաղ ու արդարացի կարգավորման,
մեր Արդար Դատի պաշտպանու-
թյան նվիրական գործին: Ինչպես
անցյալում, այնպես էլ այսօր, ե՛ւ
վաղը բազմաթիվ խնդիրների լու-
ծումն առավել ոյուրին պիտի լինի
մեր ժողովրդի հնարավորություն-
ների մեկտեղման շնորհիվ: Մեր
միասնության առանցքը հայրենի
մեր երկիրն ու Առաքելական մեր
Սուրբ Եկեղեցին են, որոնց շուրջ
համախմբված՝ մեր զավակների
համար պիտի կառուցենք ապա-
հով, բարօր ու երջանիկ երկիր, պի-
տի զորացնենք Սփյուռքի համալ-
նքները, հետամուտ լինենք ազգա-
յին մեր իղձերի իրականացմանը:
Աղոթում ենք առ Աստված, որ
երկնավոր Տերը խաղաղության
մեջ պահի մեր երկիրը եւ անսա-
սան՝ հայրենի մեր պետականու-
թյունը, հավատքի մեջ հաստատուն
եւ իր տեսիլքներին հավատարիմ
պահպանի մեր ժողովրդին՝ ի Հա-
յաստան, յԱրցախ եւ ի Սփյուռուս:
«Շնորհ, սեր եւ խաղաղութիւն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ե-
ղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեան.
ամեն»:

Մարտի 19-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին
Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն
Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ու-
ղերձ է հղել Վլադիմիր Պուտինին՝ Ռու-
սաստանի Դաշնության նախագահի
պաշտոնում վերընտրվելու կապակցու-
թյամբ:
«Համայն հայության հոգեւոր կենտրոն
Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հայրապետա-
կան Մեր օրհնությունն ենք հղում Ձեզ եւ
հանուն Գերագույն հոգեւոր խորհրդի, Հա-
յաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու
հոգեւոր դասի եւ մեր ողջ հավատավոր
հոտի՝ շնորհավորում Ռուսաստանի Դաշ-
նության նախագահ ընտրվելու առիթով:
Ձեր անվիճելի հաղթանակն ընտրու-
թյուններում ակնհայտ վկայությունն է այն
բացառիկ վստահության, որ Ռուսաստա-
նի բարեպաշտ ժողովուրդն ունի ինչպես
Ձեր անձի եւ համակողմանի գործունեու-
թյան, այնպես եւ հայրենիքի հետագա
զարգացման, պայծառացման եւ բարօ-
րության, միջազգային հարթակում Ռու-
սաստանի Դաշնության դերակատարու-
թյան Ձեր տեսլականի նկատմամբ:

**Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագիրը
Վլադիմիր Պուտինին՝ ՌԴ նախագահի պաշտոնում
վերընտրվելու կապակցությամբ**



...Հայտնի է Ձեզ, թե ինչպիսի հարգանք
եւ սեր է տածում հայ ժողովուրդը Ձեր եւ



Ռուսաստանի նկատմամբ. զգացումներ՝
փորձված դարավոր եղբայրությամբ եւ

վկայված այսօրվա դաշնակցության,
գործընկերության եւ համագործակցու-
թյան սերտ կապերով: Ուրախ ենք արձա-
նագրել այն հոգածությունը, խնամքն ու
ուշադրությունը, որ ՌԴ իշխանություննե-
րը, Ձեր անձնական մասնակցությամբ,
դրսեւորում են հայկական Սփյուռքի եւ
Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղե-
ցու հանդեպ:
Մեր հանապազ աղոթքն է, որ ամենու-
րոք Տերն Իր Աջի հովանու ներքո խաղա-
ղության ու բարեկեցության մեջ պահպա-
նի Ռուսաստանի Դաշնությունը եւ նրա
աստվածասեր ժողովրդին»,- ասված է Վե-
հափառ Հայրապետի շնորհավորագրում:
Ուղերձում Նորին Սրբությունը հայցել է
երկնավորի շնորհներն ու զորակցությու-
նը ՌԴ ընտրյալ նախագահին՝ իր բարձր
ծառայության մեջ:

ՄԲ ԶԱՏԻԿ - ՏՕՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ



«Ի Բէն է Տէր՝ աղբիւր կենդանութեան եւ լուսով երեսաց Բոց տեսանմանք զլոյս»:

Յարութեան տօնը կը դիմաւորենք անգամ մը եւս, եւ անկասկած իւրաքանչիւր մեր հոգու մինչեւ խորքը կը զգանք Նոր կեանքն ի Բրիստոս: Եւ երբ աղօթքով մեր հայեացքը կ'ուղղենք առ Աստուած, Իր մէջ կը գտնենք կենդանութեան աղբիւրը եւ Իր ներկայութիւնը կ'ընդունինք որպէս լոյսը մեր կեանքին:

Բրիստոսի Յարութեան խորհուրդը մարդկութեան կեանքը յեղաշրջեց, եւ մարդը իր մէջ գտաւ վերստին կենդանութեան շունչը: Հաւատքով կը նայինք Յարութեան ճշմարտութեան եւ կ'ըմբռնենք այն, որ Բրիստոսի Յարութիւնը ճանապարհն է յաւիտենականութեան: Հաւատքի այս գիտակցութիւնն ապրող քրիստոնէայ մարդն իր կեանքը կը հրաշագործէ եւ իր մէջ կը գտնէ ծնունդը արժեւորումը կեանքով մը ապրելու իմաստութեան: Նոյնը կը վերաբերի նաեւ քրիստոնէայ ժողովուրդներուն, որոնք ընտանիքի մէջ Բրիստոսի Անտարանով ապրող մեր Եկեղեցւոյ զաւակները դարձնում լուսաւորած են իրենց կեանքը, որովհետեւ մշտապէս իրենց հայեացքն ուղղած են առ Աստուած՝ որպէս աղբիւր կենդանութեան եւ Աստուծոյ ներկայութիւնն ընդունած՝ որպէս Նոյնը աշխարհին:

Բրիստոս յարեաւ ի մեռելոց. Օրինեալ է Յարութիւնն Բրիստոսի: Բրիստոսի Յարութեան խորհուրդն այս օրերուն մեր ազգի զաւակները անելի շեշտուած կերպով կը զգան իրենց հոգու մէջ: Թերեւս աշխարհի կեանքին մէջ շատ են այն երեւոյթները, որոնք կը ցնցեն մարդկութեան խաղաղ ու ստեղծագործական կեանքը: Եականը, սակայն, այն է, որ կեանքի մարտահրաւերները ոչ մէկ ձեւով կը տկարացնեն հայ քրիստոնէան իր հաւատքի կեանքին մէջ, որովհետեւ մեր կեանքին նպատակ տուող գերագոյն ճշմարտութիւններն են վերանկախացեալ մեր Մայր հայրենիքն ու Սբ Էջմիածինը, փառապանծ մեր ժողովուրդի զաւակները ի Հայաստան, յկրկին եւ ի Սփիւռս աշխարհի, նահատակ մեր գիտորներու արեան կանչը եւ յաղթանա-

կի շունչով հարուստ տեսլապաշտ մեր երիտասարդները, որոնք մեզի կը ներկայանան որպէս խորհուրդը Յարութեան հրաշքին:

Բրիստոսի Յարութեան խորհուրդը կ'ապրինք մենք: Բրիստոսի Յարութեան խորհուրդը մեր նախնեաց կողմէ մեզի վստահուած անկորնչելի եւ անժամանցելի ժառանգն է, որը անցեալը, ներկան ու գալիքը իրար կը կապէ:

Այս տարի Չատիկը մեզի կը հաղորդէ վերագարթնքի ոգին Սարգարապատի հողէն արծազանքող յաղթանակի պատգամով, որուն մէջ կը լսուի հայ գիտուորներու սրտին զարկերը, որոնք կռուի դաշտ մեկնելէ առաջ հաղորդուեցան Հայոց Սրբութիւն Սրբոց Սբ Էջմիածնի Մայր Խորանի սկիհէն եւ քաջութիւնն իրենց հոգու մէջ ամուր սեղմած «Մահ իմացեալ անմահութիւն է» ճշմարտութեան առջեւ խոնարհած մնացին մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը՝ հաւատարիմ մնալով Վարդանանց հաւատամքին՝ «Վասն Յիսուսի, վասն հայրենեաց»:

Սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ, Յարութեան տօնն արժեւորենք՝ սերունդներու կեանքը մշակելով քրիստոնէական հաւատքով: Յարութեան խորհուրդով ապրեցան ու գործեցին մեր նախնիք եւ հոգեւոր ու բարոյական արժեքները դարձուցին կրօնանը իրենց կեանքին:

Յարութեան տօնը հրաւեր է՝ ուղղուած բոլորիս անխտիր, որպէսզի մեր կեանքն ապրինք հաւատքով, մեր զաւակներու, երիտասարդներու եւ Նորահաստատ ընտանիքներու կեանքը ներշնչենք քրիստոնէական հաւատքով: Յարութեան տօնը մեզ կ'ուղղորդէ, որ մեզի տրուած կեանքը ունենայ ինքնութեան գիտակցութիւնը: Մեր քրիստոնէական հաւատքն իր մէջ կը կրէ հայրենական շունչը, մեր նախնեաց պատարագեալ կեանքի ոգին, մեր Սբ Եկեղեցւոյ առաքելութեան զգացողութիւնը: Եւ այս բոլորը կ'ընդունինք որպէս աստուածատուր շնորհներ:

Բրիստոս յարեաւ ի մեռելոց. Օրինեալ է Յարութիւնն Բրիստոսի:

Յովնան ՏԵՐՏԵՐԵԱՆ
ԱՄՆ արեւմտեան հայոց թեմի առաջնորդ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բելգորոդ-Դնեստրովսկիի քաղաքապետին

Մարտի 28-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց Ուկրաինայի Բելգորոդ-Դնեստրովսկիի քաղաքապետ Ալլա Գինսկի գլխավորած պատվիրակութեանը՝ ուղեկցութեամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի:

Կարեն Գրիգորյանը Նորին Սրբութեանը ներկայացրեց Ուկրաինայից ժամանած պատվիրակութեանը, անդրադարձավ երկու քաղաքների միջեւ նախանշվող համագործակցությանը:

Ալլա Ամենայն Հայոց Կաթողիկոսը փաստեց, որ երկու ժողովուրդների հարաբերությունները գալիս են դարերի խորքից եւ հատկանշված են ջերմ բարեկամությամբ: Գարեգին Բ Կաթողիկոսը կարեւորեց Էջմիածնի եւ Բելգորոդ-Դնեստրովսկիի միջեւ ծրագրվող գործակցությունը տարբեր ուղիւներում՝ նշելով, որ այն կնպաստի երկու երկրների միջեւ առկա բարի ավանդույթների առավել ամրապնդմանն ու կապերի զարգացմանը:

Նորին Սրբութեանն անդրադարձ կատարեց Բելգորոդ-Դնեստրովսկիում ձեւավորվող հայ համայնքին՝ գոհունակությամբ արձանագրելով նաեւ, որ Ուկրաինայի հայ համայնքը սիրված եւ հարգված է երկրում:



Քաղաքապետ Ալլա Գինսկը կարեւորեց Նորին Սրբութեան օրհնությունը քաղաքների միջեւ Նոր ձեւավորվող համագործակցությանը՝ տեղեկացնելով այդ շրջանակներում իրականացվելիք առաջիկա ծրագրերի՝ հատկապէս մատաղ սերնդի դաստիարակությանն ուղղված միջոցառումների եւ փոխադարձ այցելությունների մասին: Տիկին Գինսկը խոսեց նաեւ քաղաքի կյանքում հայ համայնքի ակտիվ մասնակցության մասին, ինչպէս նաեւ տեղեկություններ փոխանցեց հայկական Ս. Աստվածածնի վերափոխման եկեղեցու կառուցման ընթացքի վերաբերյալ:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Նաթան արք. Հովհաննիսյանը, Օդեսայում ՀՀ գլխավոր հյուպատոս Հայկ Գուլյանը եւ ուկրաինական բարերար Ֆելիքս Պետրոսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց Նորինձա Երեմիա վարդապետին



Մարտի 25-ին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Երեմիա վրդ. Աբգարյանին՝ ուղեկցութեամբ Մայր Աթոռի լուսարարապետ Հովնան եպս. Հակոբյանի եւ վարչատնտեսական բաժնի տնօրէն Մուշեղ եպս. Բաբայանի: Դեռեւս մարտի 1-ին

հայր սուրբը «Քահանայության եւ քահանայագործության կանոնական-եկեղեցական ընկալումները միջնադարյան Հայաստանում՝ ըստ «Կանոնագիրք Հայոց»-ի» խորագրով թեգ էր պաշտպանել՝ մասնավոր վարդապետության աստիճան ստանալու համար: Մուշեղ սրբազանի ձեռամբ մարտի 21-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում հայր Երեմիային տրվեցին մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

Հանդիպմանը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Երեմիա վարդապետին բերեց հայրապետական իր օրհնու-

թյունն ու շնորհավորանքները՝ պատգամելով առավել նախանձախնդրությամբ եւ նվիրումով շարունակել իր սպասավորությունը Հայոց Եկեղեցու անդաստանում:

Այս առիթով Նորին Սրբութեանը հայր Երեմիայի կուրծքը զարդարեց վարդապետական լանջախաչով:

«Ավանդական արժեքներ, արդի մարտահրավերներ» միջազգային համաժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում



Մարտի 22-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու աջակցությամբ Մայր Աթոռի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ «Ավանդական արժեքներ, արդի մարտահրավերներ» խորագրով երրորդ միջազգային համաժողովը, որը կազմակերպվել էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արքայապետի անունից: Երկու եկեղեցու ներկայացուցիչները, որոնք մասնակցություն ունեցան արժեքների փոխանցմանը, արդի մարտահրավերները, որոնք մարտահրավերներ են համաժողովը, որը կազմակերպվել էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արքայապետի անունից: Երկու եկեղեցու ներկայացուցիչները, որոնք մասնակցություն ունեցան արժեքների փոխանցմանը, արդի մարտահրավերները, որոնք մարտահրավերներ են համաժողովը, որը կազմակերպվել էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արքայապետի անունից:

Նախքան համաժողովի գումարումը, համաժողովի մասնակիցները մատենադարանի ցուցասրահում դիտեցին Հայաստանի պետական արխիվի կողմից կազմակերպված «Եկեղեցին» ընտանեկան եւ տոհմական հիշողության պահոց» ցուցահանդեսը: Համաժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո լիազորմար նիստը վարող «Ինտեգրացիա եւ զարգացում» հասարակական

կազմակերպության նախագահ Արամ Սաֆարյանը, կոնֆերանսի անցկացմանն աջակցություն բերելու համար, մասնակիցների անունից երախտագիտություն հայտնեց Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մոսկվայի ու Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարքին:

Այնուհետեւ ներկայներին ողջունեց Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրէն Մարկոս քնն. Մանգասարյանը՝ փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները: Տեր հայրն ուրախությամբ արձանագրեց Հայ առաքելական եւ Ռուս Ուղղափառ եկեղեցիների ներգրավվածությունը կոնֆերանսին՝ կարեւորելով

համաժողովում արձանագրվելիք կյանքը եւ ավանդական արժեքների պաշտպանության գործում Եկեղեցու դերակատարությունը: Համաժողովի մասնակիցներին ողջունեցին նաեւ ՀՀ ԱԾ պատգամավոր Հայկ Բաբուխանյանը, Մոսկվայի Պատրիարքության արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի միջբրիտանական հարաբերությունների գծով քարտուղար Ստեֆան արք. Իգումովը, Գյումրիում Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի ներկայացուցչության տեսուչ Անդրեյ վրդ. Վաքը եւ Ռուսաստանի գիտության ու մշակույթի կետերի ղեկավար Սերգեյ Ռուբինսկին եւ այլք: Ընթերցվեց նաեւ ՀՀ-ում Ռուսաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ի-

վան Վոլինսկիի ուղերձը կոնֆերանսի մասնակիցներին: Համաժողովին ավանդական, ընտանեկան արժեքների, դրանց սպառնացող մարտահրավերների, այս առնչությամբ աշխարհաքաղաքական իրողությունների ներգործության, երիտասարդության աշխարհայացքի ձեւավորման վրա հետազոտություններ եւ սոցիալական ցանցերի ազդեցությունների վերաբերյալ զեկույցներ ներկայացրեցին Հայաստանի եւ Ռուսաստանի փորձագետներ, հասարակական գործիչներ եւ եկեղեցականներ: Չեկուցումների հաջորդած քննարկումների ավարտին համաժողովի մասնակիցները շրջայց կատարեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, եղան Մայր տաճարում եւ թանգարաններում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՉԳԱՊԱՀՊԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նվիրվում է Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ծննդյան 110-ամյակին

Սկիզբը՝ թիվ 1-5

Աշխարհասփյուռ հայությանը հեռագրվում է Ս. Էջմիածնի նոր գահակալի, ինչպես նաև՝ Մյուռնուօրինների արարողության ավետիսը:

Աշխարհի տարբեր ծագերից շնորհավորական հեռագրեր են գալիս Կաթողիկոսին, մինչդեռ Մայր Աթոռ Սբ Էջմիածնում դեռևս եպիսկոպոս եղած տարիներին ավելի հաճախ լինելով եւ ավելի մոտիկից խնդիրներին ծանոթանալով՝ երիտասարդ Վեհափառը չէր շտապում ուրախանալ, նրա մտահոգությունները շատ էին, լուծելիք հարցերը՝ բազում:

Կ. Պոլսի պատրիարք Գարեգին Խաչատուրյան Տրապիզոնցուն 21.01.1956 թ. ուղարկած իր նամակում երիտասարդ Վազգեն Առաջին Կաթողիկոսը տազնապում եւ գրում է Մայր Աթոռի վիճակի հետ կապված իր մտահոգությունների մասին:

Թեւեւ երկրում նսեմացված էր հոգեւորականի դերը, պետության եկեղեցիական քաղաքականության արդյունքում խղճուկ, ինքնիշխանությունից զուրկ մի կառույցի էր վերածված Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին, գանձարանը գրեթե դատարկ էր, որեւէ նախաձեռնության համար պատվար լինելուն անընդունակ, Վեհափառին հաջողվում է կարճ ժամանակամիջոցում նվաճել բոլորի սերն ու հարգանքը, վարակել իր աշխատասիրությամբ ու հայրենաշինությամբ՝ այսպես ցրելով նաեւ խավարը, որ Մայր Եկեղեցուն էր պարուրել:

Օգտվելով «խրուչչովյան ձնհալի տասնամյակի» ընծեռած հնարավորություններից՝ խորաթափանց քաղաքագետի եւ բարձրակարգ աստվածաբանի հանդիպումը մեկ անձի մեջ ազգաշահ եւ ուրույն լուծումներ թելադրեց: Նա իր գործունեության տիրույթ

վերցրեց ոչ միայն եկեղեցապատկան հարցերի շրջանակը՝ լծվելով Մայր Աթոռի հոգեւոր-վանական, կրթական, վարչական եւ տնտեսական կյանքի վերակառուցման պատասխանատու աշխատանքներին, այլեւ ընդգրկեց համընդհանուր նշանակության խնդիրներ: Ժամանակը պահանջում էր գիտակցված, ինքնակամ նվիրում Հայաստանյայց Եկեղեցուն: Նորընտիր Վեհափառը բոլորի համար նվիրումի վառ օրինակ էր:

Նորած Վաթողիկոսն ի սկզբանե խորապես հասկացել ու գիտակցել էր իր ժամանակը: «Վասնզի Մեր տեսակետով էականը այն չէ, թե ինչ է ժամանակը ինքն իր մեջ, թե առարկայական իրականության կիսամապատասխանե՞ ան, թե՞ պարզապես մարդկային սխալականության մեկ կերպն է, այլ էականը այն է, թե անսկզբ ու անվախճան ժամանակի հավիտենական տեւողության մեջ ամեն մեկս մեր ժամանակն ունինք: Եվ ահա մեծ հարցումը՝ ինչպե՞ս ապրիլ մեր ժամանակը» (Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Գիրք չորրորդ, կոնդակներ, քարոզներ, ելույթներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1983, էջ 45):

Նման հարցադրում արվել էր դեռևս Սկրտիչ Խրիմյանի կողմից, ով իր ժամանակը բնութագրել էր «խորածածուկ, մարտագոռ, ավերիչ, կործանիչ, սգո, գրկաց, ջախջախիչ» բառերով, սակայն, գրույցի բռնվելով հավերժ ու հարատև ժամանակի հետ՝ Մեծն Խրիմյան Հայրիկը լավատեսորեն էր ավարտել միտքը, թե մի օր գալու է «ազատության բարեգուշակ ու նորածին ժամանակը»՝ կտակելով այդ ժամանակը տեսնելու հույսը գալիք սերունդներին (Խրիմյան Հայրիկ, Ժամանակ եւ խորհուրդ իւր, տպագ. Պալենց-Արզումանեան, Կ. Պոլիս, 1909, էջ 9):

Վազգեն Առաջինի խոհեմությունը եւս

գալիքի տեսլականով էր առաջնորդվում:

1960-ի սեպտեմբերի 13-ից 22-ը Փարիզ կատարած իր ուղեւորության ընթացքում նա անկեղծորեն խոստովանում է. «Գիտեք, երբ 1956 թ. արտասահման եկանք, Մենք տակավին լրիվ հայաստանցի չէինք: Բայց հիմա տակավին կկարծենք, որ կրնանք ինքզինքնիս հայաստանցի նկատել: Կրնանք հետեւաբար ձեզի վստահեցնել, թե իրապես ու խորապես կճանչանք հայաստանցի հայ մարդը եւ գիտեք, թե հայաստանցի հայ մարդու հոգիին մեջ ինչ ապրումներ կծաղկին» (Վազգեն Ա Հայրապետ Հայոց, Կոնդակներ, քարոզներ, ծառեր, ելույթներ, Գիրք երկրորդ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1968, էջ 166: Ամենայն Հայոց Հայրապետի խոսքը «Հուսարեր» մշակության ընկերության սրահում, 1963, Նոյեմբերի 5):

Գաղափարներից մեկն էլ Հայ Առաքելական Եկեղեցու հավատի ոգեղեն հաղթանակն էր՝ իր ժամանակի շոշափելի վայրագությունների եւ իրողությունների հանդեպ:

Երիտասարդ Վեհափառին հաջողվում է իր շուրջ հավաքել մտավորականներին, արվեստագետներին, գրողներին, ճարտարապետներին: Կաթողիկոսի հետ յուրաքանչյուր գրույց ծրագրերի, մտահղացումների, նորի որոնման ճանապարհներ է ուղենշել ժամանակի հայտնի արվեստագետների համար. «...Իր արթուն կենդանությամբ կարող էիր գլուխդ անվրդով բարձին դնել՝ միաժամ, որ տանդ տակով ջուր չի գնալու, եւ գլխիդ դավադիր սուր չի խաղալու», - այսպես էր բնութագրում Վեհափառին նրա ժամանակակիցը՝ անվանի գրող Հր. Մաթեոսյանը (Մաթեոսյան Հր., Սպիտակ թղթի առաջ, Եր., 2004, էջ 342):

Վազգեն Առաջինը հնարավոր դարձրեց, իրագործեց ծրագրեր ու ձեռնարկ-



ներ, որոնք դեռ չէին հաջողվել ոչ մի հովվապետի:

Կաթողիկոսական ընտրություններից հետո Վեհափառը, իբրեւ առաջին նախաձեռնություն, սկսեց ոչ միայն տեղական, այլեւ Սովետական կառավարության հետ բանակցային-նամակագրական կապ հաստատելուց՝ վերականգնելու Մայր Եկեղեցու կարգավիճակը, խոնարհված եկեղեցիների վերաշինությունը, հոգեւորականի կերպարի երբեմնի փառքը. «Այո՛, ես համաձայն եմ, որ հայ հոգեւորականը չպետք է զբաղվի միջկուսակցական հակամարտություններով եւ պարտավոր է վեր կանգնել այդ մարդկանցից՝ լինելով անխտիր բոլորի հայրն ու մխիթարիչը: Սակայն երբ հարցը վերաբերում է համայն Եկեղեցու եւ ժողովրդի ճակատագրի հետ կապված հարցերին, հայ հոգեւորականը, այո՛, թե՛ իրավունքը ունի եւ թե՛ պարտականությունը՝ իր խղճի խոսքն ու հորդորը ասելու: Այսպես են գործել անցյալում մեր Եկեղեցու շատ Հայրապետներ ու պատրիարքներ: Եվ թող թույլ տրվի ինձ այստեղ վկայել, թե նրանք հաճախ եղել են ավելի իրապաշտ ու հեռատես, ավելի դիվանագետ մեր ազգի ճակատագրական պահերին» (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի արխիվ, գործ 415 («Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Ս. Վազգեն Ա Հայրապետի խոսքը գահակալության երեսնամյակի հանդիսության ժամանակ՝ 30.09.1985):

Շարունակությունը՝ էջ 6

ՎԻԵՆՆԱՅԻ ԵՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՈՒԹԱՐՅԱՆ ՂԱՅՐԵՐ ՆՈՎԱԵԾ ԳԱԹԸՐՃՅԱՆԸ ԵՎ ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳԻՍՅԱՆԸ՝ ՆԻԿԻԱԿԱՆ ՂԱՆԳԱՆԱԿԻ ԱԿՆԱՌՈՒ ՄԵԿՆԱԲԱՆՆԵՐ

(Եվրոպացի մասնագետների գնահատմամբ)

տեսցին. զի այժմ մեծասցին մինչեւ ի ծագ երկրի» (Միք. Ե 2-4): Այստեղ, Միքիե մարգարեն կանխագուշակում է Աստծո Որդու ապագա ծնունդը Բեթղեհեմ քաղաքում՝ անասունների մատուրում, որ նկարագրել է Դուկաս ավետարանիչը (Ղուկ. Բ 4-7): Զրիստոսի խաչելությունը եւ Նրա զգեստների կողպուտն են կանխագուշակված Դավիթ մարգարեի Սաղմոսում. «Բաժանեցան գհանդերս իմ ի մեջ իւրեանց, եւ ի վերայ պատմունճանի իմոյ վիճակս արկանեին» (Սաղմոս Դավթի, ԻԿ 19): Սաղմոսի այս խոսքերը բառացի վկայված են Մատթեոսի Ավետարանում. «Եւ հանեալ զնա (զՅիսուս) ի խաչ, բաժանեցին (զինուորը դատաւորին) գհանդերսն նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասացաւ ի մարգարէէն. Բաժանեցին գհանդերսն իմ յիւրեանս, եւ ի վերայ պատմունճանի իմոյ վիճակս արկանեին» (Մատթ. ԻԷ 35): Նման զուգահեռ վկայությունները կարելի է շարունակել:

Իմ «Սովսե Խորենացու դարը» մենագրության մեջ մատնանշել եմ, որ Զրիստոսն իր չորս Ավետարաններում պատվիրում է՝ «քարոզեսցի գԱւետարանս ընդ ամենայն տիեզերս», բայց քրիստոնյա նորադարձ վարդապետները՝ գայթակղված Աստծո Որդու մասին մարգարեների ասույթներից, շտապեցին Հին Կտակարանի ժողովրդի պատմությունը կցել Նոր Կտակարանին՝ «Սուրբ Գիրք» ընդհանուր անունով (Ա. Մուշեղյան, Սովսե Խորենացու դարը, Եր.,

2007, էջ 172): Այդ ժամանակ քչերն էին գիտակցում այն վտանգը, որ իր հետ բերում էր հուդայական միաստվածությունը քրիստոնեության նոր դավանանքին: Ի հակադրություն քրիստոնյա վարդապետների՝ հուդայականության մեկնիչները նպատակ էին հետապնդում միացյալ Սուրբ Գրքի միջոցով քրիստոնյաներին քարոզել եւ պարտադրել Հին Կտակարանի միաստվածության գաղափարը, որն ի վերջո աղետալի էր լինելու քրիստոնեության համար, քանի որ միաստվածությամբ իսկ նրանք ի սկզբանե մերժում էին Աստծո Որդու գաղափարը, այսինքն՝ բուն քրիստոնեությունը, քանզի քրիստոնեությունն այլ բան չէ, քան դավանանք կամ ուսմունք Աստծո Որդու մասին: Փաստորեն այն, ինչ չհաջողվեց հռոմեացի կայսրերին (Օկտավիանոս, Տիբերիոս, Կալիգուլա, Ներոն), հեշտությամբ կիսաջողեր ներսից հուդաիզմի միաստվածությունը:

Այս է պատճառը, որ երկուստեք սուր բանավեճ առաջ եկավ երկու արմատապես տարբեր կրոնների գաղափարախոսների միջեւ: Ալեքսանդրացի Արիոս երեքը եւ իր կողմակիցները Մարիամ կույսից ծնված Հիսուսին չէին համարում Աստծո Որդի, այլ օտար արարած: Այդ մասին Խորենացին գրում է. «Ընդ այն ժամանակս երեւեցաւ Արիոս աղեքսանդրացի, որ ուսոյց չարաչար ամբարշտել, ոչ գոլ գՐՈՂԻ հաւասար Հօր, եւ ոչ ի բնութենէ եւ յեութենէ Հօր. եւ ոչ

ծնեալ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար զոմն եւ արարած եւ կրօսեր, եւ յետ ժամանակի գոյացեալ. որ ըստ արժանեաց իւրոց ամբարիշտս այս Արիոս ի գարշելիսն (այն է՝ արտաբնոցում) ընկալաւ զստականումն» (Սովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Ս. Արեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տիֆլիս, 1913, գիրք Բ, 20, էջ 239): Նշված սուր վեճերի պատճառով ինքնակալ Կոստանդինոս կայսրը փոքրասիական Բյուզանդիա գավառի Նիկիա քաղաքում (Կ. Պոլսի մոտերքում) 325 թվականի մայիսի 20-ին հրավիրեց ընդհանրական Եկեղեցու առաջին Տիեզերական ժողովը, որտեղ 318 եպիսկոպոսները մերժեցին Հին Կտակարանի միաստվածությունը եւ ընդունեցին Նիկիական հանգանակով քրիստոնեության նոր՝ միասնական աստվածություն հռչակեցին Սուրբ Երրորդությունը, որով «Հայր Աստված, Որդի Աստված եւ Սուրբ Հոգի Աստված» համագոյությունը հաղթանակ տարավ հուդայական միաստվածության նկատմամբ (Հայ Եկեղեցու ընդունած Արեւելյան հանգանակների եւ ավելի ուշ՝ «Գիրք Հարցմանց» մատյանում Գրիգոր Տաթևացու (1346-1409) շարադրած երրորդ հանգանակի եւ Արեւմտյան Եկեղեցիների հետ ունեցած տարբերությունների մասին տե՛ս Շահե արք. Աճեմյանի հեղինակած «Մեր հաւատքը» գիրքը, Էջմիածին, 2001, էջ 4-28):

Շարունակությունը՝ էջ 7



Հայր Հովսեփ Գաթրճյան

Սկսած մ. թ. II դարից՝ քրիստոնյա առաջին վարդապետները, որոնք հիմնականում հրեաներ եւ ասորիներ էին, փորձում էին մեկ Սուրբ Գրքի մեջ միավորել Հին եւ Նոր Կտակարանները՝ Զրիստոսի վերագրելով բոլոր այն հոգումները, որոնք առկա են Հին Կտակարանի մարգարեների վկայություններում հրեաներին խոստացված ապագա գերագույն փրկչի՝ մեսիայի մասին եւ դրանք մեկնաբանում էին իբրեւ վկայություններ Աստծո Որդու ծննդյան, խաչվելու եւ համբարձման վերաբերյալ: Միքիե մարգարեության մեջ կարդում ենք. «Եւ դու, Բեթղահե՛մ, տուն Եփրատայ սակաւաւոր, իցես լինել ի հազարաւորս Յուդայ. ի քէն ելցէ ինձ լինել իշխան Իսրայելի, եւ ելք նորա ի սկզբանէ աւուրց աշխարհի: Վասն այնորիկ տացէ զնոսա մինչեւ ի ժամանակ ծննդականին. ծնցի՛ եւ մնացորդը եղբարց նորա դարձցին առ որդիսն Իսրայելի: Եւ կացցէ, եւ տեսցէ եւ հովուեսցէ հօտի իւրոյ զօրութեամբ Տեառն, եւ ի փառս անուան տեառն Աստուծոյ իւրեանց հաստա-



Մարտի 16-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը հայրապետական երկօրյա այցով մեկնեց Ուկրաինայի հայոց թեմ՝ մարտի 17-ին Դնեպրի Նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման առիթով:

Նորին Սրբությանն ուղեկցում էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Յովհաննիսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Ռուսիայի հայոց թեմի առաջնորդ Տաթև եպս Յակոբյանը, Նորին Սրբության գավազանակիր Աղան արք. Երևանյանը եւ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քնն. Մելիքյանը:

Ամենայն Յայոց Կաթողիկոսին Կիևի «Բորիսպոլ» օդանավակայանում դիմավորեցին թեմակալ առաջնորդ Մարկոս եպս Յովհաննիսյանը, Ուկրաինայում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Անդրանիկ Մանուկյանը եւ Ուկրաինայի հայերի միության նախագահ Վիլեն Շատվորյանը:

Ուկրաինայի քաղաքամայր Կիևում Գարեգին Բ Կաթողիկոսը, ուղեկցությամբ հոգեւորականների, այցելեց կառուցվելիք եկեղեցու տարածք, ուր Յայոց Յայրապետին դիմավորեցին «Յրաշափառ» շարականի երգեցողության ներքո:

Այնուհետեւ, ձեռամբ Վեհափառ Յայրապետի, կատարվեց եկեղեցու հիմնարկերի արարողությունը: Ըստ Յայ եկեղեցու ծիսակարգի՝ շարականների եւ սաղմոսների երգեցողության ներքո Նախ ջրով, ապա գինով լվացվեցին եկեղեցու հիմքերում գետեղվելիք 16 քարերը՝ Զրիստոսի 12 առաքյալների, Պողոս առաքյալի, երկու ավետարանիչների եւ սբ Գրիգոր Լուսավորչի անուններով, որից հետո Վեհափառ Յայրապետը եւ առընթերակա եպիսկոպոսները ս. Մյուռնոսով օծեցին եկեղեցու հիմքերի քարերը, աղոթեցին կառուցվելիք տաճարի անսասանության եւ օրհնաբեր առաքե-

լության համար: Օծումից հետո տասնվեց խաչքավորների կողմից քարերը գետեղվեցին եկեղեցու հիմքում:

Ամենայն Յայոց Կաթողիկոսը նշանակալից այս իրադարձության կապակցությամբ նաեւ իր պատգամը բերեց ներկաներին.

«Չոգու անհուն բերկրանքով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից ժամանել ենք Ուկրաինա՝ Դնեպրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման առիթով, եւ ուրախ ենք Մեր այցի շրջանակներում կատարելու նաեւ Կիևի եկեղեցու հիմնարկերի արարողությունը եւ հայրապետական Մեր օրհնությունը բերելու հավատավոր Մեր զավակներին:

Ամենքիդ աղոթակցությամբ եւ մեր եկեղեցականաց հետ միասին կատարեցինք եկեղեցու հիմնարկերի արարողությունը, որը Նոր ավույն, հույս եւ խանդավառություն է հաղորդելու ուկրաինահայոց հոգեւոր կյանքին: Ս. Նահատակաց մատուռի հարեւանությամբ վեր հանելիք այս տաճարը մեր զավակների ազգային-հոգեւոր կյանքի վերագարթոնքի մի Նոր կենտրոն պիտի դառնա եւ ջինջ աղբյուր՝ ջրիստոնեական արժեքներով զորացման: Այն պիտի նաեւ խոսուն վկայությունը դառնա Ուկրաինայում հայոց պատմական բազմադարյա ներկայության:

Պատմական աղբյուրների վկայությամբ՝ տակավին 11-րդ դարից այս երկրամասում հիշատակվում է հայոց Եպիսկոպոսական Աթոռի առկայությունը: Տարբեր քաղաքներում կառուցված հայկական աղոթավայրերը խոսուն վկաներն են երկու ժողովուրդների միջեւ առկա սերտ կապերի: Կիև քաղաքում եւս հիշատակվում է հայկական Ս. Աստվածածին եկեղեցին, որը 17-րդ դարում հրդեհի հետեւանքով հիմնովին այրվել է: Եվ այս պատճառով հետագայում հայերին հոգեւոր արարողությունների համար հատկացվել է Կիևի Ս. Սոֆիա տաճարի մատուռներից մեկը, ինչի մասին վկայում են տաճարում պահպանված Յայ եկեղեցու սրբերի որմնանկարները եւ 22 հայերեն արձանագրությունները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Յայոց

Սիրելի՛ հայորդիներ, այսօրվա արարողությունը եւս մեկ անգամ բերում է բերկրանքը՝ վերապրելու Ուկրաինայի հայ գաղթաբնակի հոգեւոր զարթոնքի եւ ձեռքբերումների փառավոր հիշատակների: Փառք ենք վերառաքում առ Աստված ձեր աշխույժ ազգային-եկեղեցական կյանքի համար: Մխիթարություն է Յայրապետիս համար այսօր ականատեսը դառնալ ձեր հոգեւոր արթնությանը, հայրենասեր եւ եկեղեցանվեր ձեր ոգուն: Ձեր հավատավոր ընթացքի եւ աստվածահաճո գործոց արգասիքն է նաեւ եկեղեցու կառուցման այս ձեռնարկումը, որ Աստծո կամոք պիտի վեր խոյանա եւ իր կամարների ներքո համախմբի հայորդիներին:

Եկեղեցին կենդանի Մարմին է Զրիստոսի, մենք՝ Նրա անդամները՝ միավորված Աստծո անբավ սիրով եւ գուրգուրանքով: Այստեղից են բխում շնորհն ու օրհնությունը ազգային, համայնքային եւ ընտանեկան մեր կյանքի: Այստեղ ենք մենք մեր Տիրոջ Մարմնի եւ Արյան հաղորդությամբ դառնում մեկ, դառնում կենդանի Աստծո եկեղեցի՝ սյուն եւ հաստատություն ճշմարտության (հմմտ. Ա Տիմ. Գ 15): Դարեր շարունակ Յայաստանյայց Առաքելական Ս.

դել ձեր կյանքը՝ հավատարմությամբ պահպանելով Նախնյաց ավանդները եւ կյանքի կոչելով ձեր նվիրական իղձերն ու երազանքները: Չորավիճ եղեք հայ դպրոցին եւ Յայոց եկեղեցուն՝ բանուկ պահելով այդ ճանապարհը, որպեսզի անվորով եւ համերաշխ, շեն ու պայծառ լինի համայնքային ձեր կյանքը՝ դառնալով աղբյուր օրհնության գալիք սերունդների համար: Որպես Ուկրաինայի ազնիվ, գնահատված քաղաքացիներ՝ ձեր ներդրումը շարունակեք բերել Ուկրաինայի կյանքի բարեշինությանը, որը դժվարին օրեր է ապրում ներկայում: Մեր աղոթքն է, որ Ողորմած Աստված երկնային խաղաղության շնորհը հեղի Ուկրաինայի աստվածասեր ժողովրդի կյանքին եւ պարզեւի Նորանոր ձեռքբերումներ՝ պայծառ ու առաջընթաց կյանքի կերտման ճանապարհին»:

Նորին Սրբությունը հայրական իր օրհնությունը բերեց Ուկրաինայի հայոց թեմի բարեջան առաջնորդ Մարկոս եպս Յովհաննիսյանին, ինչպես նաեւ թեմի հոգեւորականաց՝ Նրանց նվիրյալ եւ անձնորդ ծառայության համար: Յայրապետն աղոթքով հիշեց Նախորդ առաջնորդ լուսաւորի Գրիգորիս արք. Բունիաթյանին, ով այս ե-



Եկեղեցին աշխարհի տարբեր ծագերում Տիրոջ Ս. Խորանի շուրջ համախմբել է իր բարեպաշտ զավակներին՝ Նրանց կյանքը խարսխելով տերունական արժեքների եւ պատվիրանների վրա:

Հավատարիմ իր աստվածատուր առաքելությանը՝ Յայոց եկեղեցին, ի հեճուկս մեր ժողովրդին եւ հայրենիքին պատուհասած զանազան փորձությունների, արհավիրքների եւ զրկանքների, ամենայն ջանադրությամբ համախումբ է պահել մեր ժողովրդին՝ ս. Գրիգոր Լուսավորչի՝ առկայծող հույսի ու հավատի մշտավառ կանթեղի շուրջ: Մեր եկեղեցին դարձել է պատսպարանն ու պաշտպանը ազգային սրբազան ժառանգության եւ երաշխավորը հայի ինքնության անխաթար պահպանության՝ մշտադիմաց պահելով անկախ պետականության վերականգնման, հաճախ ազգային կյանքի պայծառության տեսլականը: Ուր էլ որ հայտնվել է հայը, կողք կողքի վեր են հանել հայկական եկեղեցին եւ հայ դպրոցը՝ մեր ժողովրդին ջամբելով Աստծո եւ ազգի նկատմամբ սերը, հայրենիքի եւ Մայր եկեղեցու նկատմամբ անսակարկելի նվիրումը: Հավատքն ու դպրությունն են դարձել ի վեր եղել եւ այսօր էլ կան հայ ազգի հարատեւության գրավականները՝ անկախ հայրենիքի իրողությամբ գորացյալ:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այս մտորումներով Մեր հորդորն ենք բերում ամենքիդ՝ Նախանձախնդրությամբ եւ աստվածահաճո ընթացքներով առաջնոր-

կեղեցաշեն Նախաձեռնության ակունքներում եր կանգնած:

Գարեգին Բ Կաթողիկոսը նաեւ գոհունակությամբ անդրադարձավ հայ համայնքի հանդեպ երկրի իշխանությունների հոգատար վերաբերմունքին, որի արտահայտությունն է եկեղեցու կառուցման համար կատարված հողահատկացումը:

Յայոց Յայրապետն իր գնահատանքն ու բարեմաղթանքները փոխանցեց նաեւ եկեղեցու բարերար տիար Վիլեն Շատվորյանին՝ հույս հայտնելով, որ Նրա ազնիվ մղումը բարի օրինակ կդառնա ուկրաինաբնակ բազում այլ հայորդիների համար՝ իրենց ներդրումն ունենալու աստվածահաճո եւ սրբազան այս գործում: Ի գնահատություն ազգագույն եկեղեցանվեր գործունեության՝ Նորին Սրբությունը պրն Շատվորյանին շնորհեց Յայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան:

Վերջում Ամենայն Յայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Բարձրյալն Աստված Իր հոգածու եւ ամենախնամ Ս. Աջի հովանու ներքո խաղաղության եւ բարօրության մեջ պահի ու պահպանի Ուկրաինայի հայ համայնքը, ազգային-կրթական հաստատությունները եւ Առաքելական մեր Ս. Եկեղեցին:

Այնուհետեւ, հայրական իր օրհնությունը բաշխելով ներկա բարեպաշտ ժողովրդին, Նորին Սրբությունն այցելեց Սրբոց Նահատակաց մատուռ, ծանոթացավ կատարված աշխատանքներին:



Կաթողիկոսի այցը Ուկրաինա

Նույն օրը Նորին Սրբությունը նաեւ հայրապետական իր օրհնությունը բերեց Ուկրաինայի հայերի միության տարեկան առաջին կոնֆերանսի մասնակիցներին: Ողջունելով միության գործունեությունը՝ Վեհափառ Հայրապետը կարեւորեց միության նախագահի եւ տարածքային մարմինների ջանքերով համայնքներում ազգային կյանքի կազմակերպմանն ու հայապահպանությանն ուղղված ծրագրերը: *«Սփյուռքաբնակ մեր զավակների կյանքում մեծագույն մարտահրավերն այսօր ազգային ինքնության, մայրենի լեզվի եւ ազգային արժեքների անխաթար պահպանությունն է՝ գրավականը մեր ազգի հարատևության: Սեփական արմատների ճանաչողությունն է երաշխիքը իրական շենն ու բարձր աշխարհասփյուռ հայոց կյանքի: Հայրենիքի եւ նախնայաց ավանդների նկատմամբ սերն ու հավատարմությունը ճանապարհն են դարձրել փայփայած մեր ազգային նվիրական իղծերի իրականացման:*

Այս վսեմ ազգապահպան առաքելությանն են կոչված մեր ժողովրդի կյանքում ձեւավորված համայնքային կառույցները, գործող կրթական հաստատություններն ու միությունները»,- նշեց Վեհափառ Հայրապետը: Հայոց Հովվապետը գոհունա-

Նորակառույց եկեղեցու առջեւ Ամենայն Հայոց Հայրապետին մեծ խանդավառությամբ ու ծափողջույններով դիմավորեցին տարբեր համայնքներից այս ուրախալի առիթով Ղնեպր ժամանած հարյուրավոր հայորդիներ՝ գլխավորությամբ հոգեւորականների եւ համայնքային կառույցների ներկայացուցիչների: Եկեղեցու օծման արարողությանը հայ համայնքի ուրախությանը բաժնեկից էին Ղնեպրոպետրովսկի մարզպետ Վալենտին Ռեզնիչենկոն, Ղնեպրոպետրովսկի մարզային Ռադայի նախագահ Գլեբ Պրիգունովը, Ղնեպրի քաղաքապետ Բորիս Ֆիլատովը, Ուկրաինայում պապական նվիրակ արքեպիսկոպոս Կլաուդիո Գուլբերտտին, Ուկրաինայի Ուղղափառ, Հռոմեակաթուլիկ, Հունակաթուլիկ եւ Լյութերական եկեղեցիների ներկայացուցիչներ:

Հընթաց օծման սրբազան արարողության՝ սաղմոսերգության ներքո ջրով եւ գինով լվացվեցին տաճարի ս. Սեդա-նը եւ օծվելիք սյուները: Այնուհետեւ Հայոց Հայրապետը ս.Մյուռնով օծեց եկեղեցու ս. Սեդանը: Թեմակալ առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանի ձեռամբ օծվեցին խորանի՝ չորս ավետարանիչների անունը կրող սյուները: Նախան արք. Հովհաննիսյանը, Արշակ եպս Խաչատրյանը եւ Տաթև եպս Հակոբյանը



Այսօր, սիրելիներ, դուք արձագանքեցիք Լուսավորիչ Հայրապետի կոչին եւ այս հողակերտ եկեղեցին կառուցեցիք, որպեսզի առավել զորանան համայնքի ազգային-եկեղեցական կյանքը, առ Աստված հույսն ու ապավինությունը: Նվիրական աղոթավայրի շինությամբ դուք վերստին վկայեցիք, որ մեր ժողովրդի զավակները շարունակում են եկեղեցիացած մնալ եւ աստվածասեր ոգին արտացոլել հավատաշեն հիանալի գործերում: Եկեղեցին, ըստ առաքյալի ուսուցման, հավատացյալ ժողովուրդն է, որի գլուխն է մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Մեր հավատքը ամրանում, սնվում ու զորանում է եկեղեցիների սրբազան հարկի ներքո, որոնց լուսեղեն խորաններից ուսուցանվում է Տիրոջ վարդապետությունը, բաշխվում Սուրբ Հոգու շնորհները: Այս հողակերտ եկեղեցին այլևս պիտի լինի հոգեւոր-ազգային կենտրոնը ձեր համայնքի, որի խնկարույր պատերից ներս, հոգեպետ զորանալով, պիտի հաստատական լինեք՝ ապրելու ավետարանական սուրբ պատգամներով, մեր հայրերի ժառանգության հանդեպ նախանձախնդրությամբ ու հայրենական ավանդներով:

Ուկրաինայում բազում են հիշատակները Մեր ժողովրդի զավակների հավատո գործերի: Այդ են վկայում այս երկրում հայոց դարավոր պատմամշակութային արժեքները, հուշարձաններն ու եկեղեցիները: Արդեն 10-րդ դարից գրավոր տեղեկություններ են պահպանվել այստեղ հայերի բեղուն գործունեության՝ հասարակական կյանքի տարբեր ասպարեզներում: Ուրախալի է, որ այսօր Ղնեպրի հայ համայնքը շարունակում է պատմական գաղթաշախի դարավոր ավանդները եւ կարելու նպաստ է բերում ազգային-եկեղեցական կյանքի զորացմանը, աստվածահաճո ի-

րագործումներով բարեգարդում իր ընթացքը: Ներկա ժամանակում մեր ժողովրդի զավակները շարունակում են հարստացնել համայնքի եւ այս երկրի պատմությունը՝ հավատավոր Նորանոր ձեռնարկներով: Մեր մաղթանքն է, որ խաղաղությունը անվորդ լինի տարածաշրջանում, եւ Ուկրաինայի ժողովուրդը համերաշխության մեջ շարունակի ստեղծագործ ու արարող իր ընթացքը: Հայրապետական Մեր հորդորն է ձեզ, սիրելիներ, որ շարունակեք ապրել ու գործել հավատքով, ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ եւ Լուսավորչի բարեխոսության հայցով ձեր աղոթքները ինչեցնելով՝ արժանանաք երկնառաք բյուր բարիքների եւ օրհնության»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը ողջունեց եկեղեցու օծման արարողությանը Քրիստոնեական եկեղեցիների սպասավորների ներկայությունը, ինչպես նաեւ իր գնահատանքը հայտնեց Ուկրաինայի պաշտոնատար անձանց, մարզային եւ քաղաքային իշխանություններին, որ բարյացակամ վերաբերմունքով զորակցություն ու աջակցություն են ցուցաբերում հայ համայնքի ազգային-եկեղեցական կյանքին:

Հայրապետական իր գնահատանքը բերելով Ուկրաինայի հայոց թեմի հոգեւոր դասին՝ գլխավորությամբ թեմակալ առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանի, Հայոց Հովվապետը նաեւ իր օրհնությունը բաշխեց թեմի առաջին առաջնորդ Նախան արքեպիսկոպոսին, հայ համայնքի ղեկավարներին եւ ուկրաինահայ իր բոլոր զավակներին: Նորին Սրբությունը աղոթքով հիշեց նաեւ նախորդ թեմակալ առաջնորդ, լուսահոգի Գրիգորիս արք. Բունիաթյանին, ում ջանքերով 2003 թվականին կատարվել էր եկեղեցու հիմնարկեցի արարողությունը:



կություն հայտնեց նաեւ Ուկրաինայի հայոց թեմի եւ միության միջեւ ձեւավորված սերտ գործակցության առիթով, որ շարունակ արգասավորվում է ազգօգուտ ձեռնարկներով եւ եկեղեցանվեր իրագործումներով:

Բարի ընթացք մաղթելով կոնֆերանսի աշխատանքներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հույս հայտնեց, որ այն խթան կհանդիսանա ազգօգուտ եւ եկեղեցաշեն Նոր ծրագրերի եւ իրագործումների համար՝ առավել ամրապնդելով միասնությունը, սերը եւ ազգային ոգին հայոց կյանքում:

Վերջում Ուկրաինայի հայերի միության նախագահը Նորին Սրբությանը հանձնեց միության «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանը:

Մարտի 16-ի երեկոյան Վեհափառ Հայրապետն իր շքախմբով մեկնեց Ղնեպր:

Մարտի 17-ին Ուկրաինայի Ղնեպր քաղաքում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը: Եկեղեցին կառուցվել է տեղ եւ տիկին՝ Ռաֆայել եւ Շամիրամ Հարությունովների ազնիվ բարերարությամբ:

կատարեցին եկեղեցու մնացյալ տասը սյուների օծումը:

Օծման արարողության ավարտին Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը հայրապետական իր օրհնությունը բերեց Ղնեպրի հայությանը՝ շնորհավորելով Նոր աղոթատան բացման բերկրալի առիթով:

«Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, Ուրախությամբ են համակված ամենքիս հոգիները Ղնեպրի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծման առիթով: Փառք Երկնավորին, որ մեր ժողովրդի զավակները շարունակում են եկեղեցաշեն աստվածահաճո ձեռնարկներով բարի նպաստ բերել մեր Ս. Եկեղեցու տերունապատվեր առաքելությանը:

Նորակառույց այս աղոթատեղին կրում է Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայոց մեծ Հայրապետի անունը, ով քրիստոնեության լույսով պայծառացրեց ողջ Հայաստան աշխարհն ու համայն մեր ժողովրդին՝ պարգեւելով քրիստոնեական հավատքի արշալույսը: Ս. Գրիգոր Լուսավորիչը նաեւ եկեղեցաշինության ավանդը փոխանցեց քրիստոսասեր մեր ժողովրդին՝ հորդորելով. *«Եկայք շինեսցուք սուրբ գիտրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»:*





Սկիզբը՝ թիվ 4-5

Աբովյանի ստեղծագործական կյանքը տեւել է մոտ 24 տարի, որի մի մասը համընկել է նրա ուսումնառությանը, մյուս մասը՝ մանկավարժական ու հանրային գործունեությանը։ Այդ ընթացքում է նա ստեղծել տասը մեծադիր հատոր կազմող նրա գրական հարուստ ժառանգությունը, որն ուսումնասիրել է գրականագիտության մի ամբողջ գիտաճյուղ՝ արժանագիտությունը։ Եղել են նվիրյալ ուսումնասիրողներ, որոնց ջանքերով իրականացվել է նրա երկերի թե՛ հրատարակությունը եւ թե՛ գիտական արժեւորումը։ Բայց Աբովյանին գնահատել են ոչ միայն գրականագետները, այլեւ մեր բոլոր նշանավոր գրողներն ու

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)

հատկապես նրանք, ովքեր ելել են Աբովյանի գրական դպրոցից կամ ստեղծագործել են նրանից տացած ներշնչանքով։ Դրա ապացույցն են ո՛չ միայն գրականագիտական ուսումնասիրություններն ու հոդվածները, այլեւ գեղարվեստական տարածանք գործեր՝ բանաստեղծություններ, պոեմներ, մեծածավալ վեպեր, որոնց էջերում ջանացել են կերպավորել մեր ժողովրդի հոգեմտավոր կյանքում վիթխարի դեր կատարած հզոր անհատականությանը, ով ապրել է մաքառումներով լի հերոսական կյանքով, բռնության ու խավարի ժամանակներում մատնանշել է ոչ միայն գեղարվեստական նոր մտածողության, այլեւ ազգային ազատության ու արժանապատվության, լուսավորության ու առաջադիմության ուղիները։ Իսկական նորարար էր նա, որ ստեղծել է տարբեր ժանրերի օրինակելի երկեր՝ քնարական ու էպիկական բանաստեղծություններ, բայաթներ, չափածո առակներ, կարճ գվարճալի պատմություններ, երգիծական ու քաղաքացիական պոեմներ, օրագրություններ, հանճարեղ «Վերք Յայաստանին», մանկավարժական դիդակտիկ-ուսուցողական վեպեր ու նորավեպեր, լեզվաբանական աշխատություններ ու ազգագրական ուսումնասիրություններ, ուղեգրական երկեր եւ այլն, որոնց պետք է ծանոթանանք։

ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքիցիտական եւ աշուղական բանաստեղծություններ։ Խ. Աբովյանը հայ գրականության մեջ թե՛ բովանդակության,

թե՛ ձևի առումով նորարար էր՝ այդ բանի բովանդակ իմաստով. չափածո եւ արձակ գրական գրեթե բոլոր ժանրերը նոր գրականության մեջ սկիզբ են առնում նրանից։ Վաղ մանկությունից նա «մեջխում յա հացի սեղանի շուրջ» ունկնդրել է ժողովրդական շրջիկ երգիչներին ու աշուղներին, զգացել հայեցի երգեցողության անհրաժեշտությունը։ Փորձել է ստեղծագործել նրանց նմանությամբ, բայց հայերենով, եւ հետեւողական պայքար է մղել օտար ու հատկապես թյուրքալեզու երգեցողության դեմ՝ հաստատելով մայրենի լեզվով բանաստեղծության ու երգարվեստի հույժ կարեւորությունը։ Ազգային դիմագծի եւ նկարագրի ձեւավորման ու պահպանման հարցում նա եկել էր այն համոզման, որ «ոչինչ այնքան չի գեղեցկացնում լեզուն, որքան խաղն ու տաղը»։ Աբովյանն այն բացառիկ հեղինակներից է, որի գրեթե ամբողջ գրական ժառանգությունը բարեբախտաբար պահպանվել է նրա որդու՝ Վարդանի շնորհիվ եւ խորհրդային ժամանակներում նրա մահվան 100-ամյակի առթիվ հրատարակվել տասը հատորով, իսկ առանձին երկեր, ինչպես «Վերք Յայաստանին», ունեցել են բազմաթիվ վերահրատարակություններ։

Խ. Աբովյան գրողն անցել է ստեղծագործական որոնումների եւ ինքնահաստատման դժվարին ճանապարհ։ Պատանության շրջանում գրական ուղին սկսել է ուսանավորներով, սակայն պահպանվել ու մեզ են հասել 1824 թ. եւ հետո գրվածքները։ Նախադրյալայն տարիներին գրած բանաստեղծությունները կրում են որոշա-

կի ազդեցություններ կամ ուշ միջնադարի տաղերգուներից՝ Պաղտասար Դպիրից, Պետրոս Դափանցուց, Սայաթ-Նովայից եւ ուրշներից ու իրեն անմիջաբար նախորդած աշուղներից, կամ կլասիցիստ հեղինակներից։ Գործածել է աշուղական տաղաչափական ձևեր ու արտահայտչամիջոցներ։ Մի քանի գրաբար տաղերում աշուղների նման նա էլ վերջին տան մեջ հիշատակում է իր՝ հեղինակի անունը.

*Ի դուռն մահու մերձեալ ահա տեսանիմ,
Գերեալ սիրովդ այսր անոր՝ անկանիմ,
Խաչատուրս ցավոք սիրոյդ տառանիմ,
Չի գեթ տացես դու մխիթար սրտի իմ։*
«Տաղ ուրախութեան եւ ի գոյն առաւօտեան»

Նույնը տեսնում ենք նաեւ «Դարձեալ ի գոյն առաւօտեանին» տաղում.

*Արդ այսքանեօք գեղոյդ կարօտ մնացի,
Չունկն իմ եղեալ ի ձայն հետոց քոյդ շաղի,
Խաչատուրս մերձ եմ ահա մեռանիլ։
Արի՛ ե՛կ տես գոնեա զմահս, սիրելիս։*

Մի քանի տաղերում պատահում են նաեւ «Դարմանելով՝ գհաչատուրս վրդով», «Խաչուկ խղճոյս լեր օգնական», «Փցուկ Խաչուկ տոհմ Ապովեան», «Խաչատուրս փափագելին», «Խաչատուր համբակ դարի», «Խաչատուր՝ անուն իմ դարձեալ յիշեցի զի մի մոռացի», «Ով Խաչիկ ի միտ առ գայս դու», «Արդ մի՛ հուսար» անմիտ Խաչիկ», «Խաչուկ խղճոյս, որ եմ ձեռք տարակաց» արտահայտությունները՝ իրարահաջորդող գրաբար տաղերի վերջին տողերում։ Իսկ Տփղիսի բարբառով եւ աշուղական տաղաչափական ձևերից մեկով՝ մուխամմազով գրած բանաստեղծություններից մեկը, օրինակ, ակնհայտորեն կրում է Սայաթ-Նովայի ազդեցությունը.

Շարունակությունը՝ էջ 8

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱԶԳԱՊԱՀՊԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 3

1955-ի նոյեմբեր ամսին նամակ հղելով Ն. Բուլգանինին՝ նա բարձրացնում է մի շարք հարցեր՝ վանքապատկան հողամասերի, Վեհարանի, նաեւ Երեմյան ու Նախկին տպարանի շենքերի վերադարձի, Էջմիածնի ենթակայության մի քանի վանքերի (Գանձասար, Ս. Խաչ, Ս. Տաթև) հետվերադարձի, Սփյուռքում թերթերի եւ գրականության առաքման, ինչպես նաեւ տարին մեկ անգամ Էջմիածնում Եպիսկոպոսական ժողով եւ հինգ տարին մեկ անգամ Ազգային-եկեղեցական ժողով գումարելու մասին։ Նա առաջ է քաշում նաեւ Թուրքիայից հայկական հողատարածքները հետ վերադարձնելու խնդիրը։

Հոգատարածքների պահանջն այդպես էլ լուրջության մատնվեց, մինչդեռ նամակի որոշ պայմաններ բավարարվեցին։

Երիտասարդ Վեհափառի առաջին քալերից երևում էր, որ Լուսավորչի գահին բազմած Կաթողիկոսն անսասան կամքի տեր, հայրենասեր մարդ էր։

Երկու ամիս անց՝ դեկտեմբերի մեկին, Կաթողիկոսի հետագա ձեռնարկումների մասին ծանուցում է առաջին սրբատառ կոնդակը, որի ոգին եւ ոճը հիշեցնում էին «Յերկ» ամսագրի հայրենասեր խմբագրին, ով օտար ափերից դեռնու կոչ էր անում. «Յայ ապագայի համար կառուցել՝ նյութական եւ մանավանդ մտավոր ու հոգեւոր իմաստով, ահա՛ մեր օրերու մեծ խնդիրը։ ...Կառուցել՝ ազգային պատմութենեւ ժայթքող հոգեկան հիմունքներուն վրա։ Կառուցել՝ ժողովուրդի ինքնուրույն մշակույթի գանձեն ներշնչված ոճով։ ...Մենք կը հաւաքուանք, մանավանդ, որ բոլոր նոր Յայերը պիտի հասնին միեւնոյն լուսավոր կետին, տեղ մը ապագային մեջ» (Յերկ, թ. 2 (հուլիս), Պուրեշ, 1937, (հորվածը՝ «Ինչի՞ կը հավատանք»)։

Կոնդակում, ի տարբերություն հոդվածի, արդեն հստակ երևում էր, թե ինչ կառուցել, ինչպես կառուցել եւ որտեղ։

Կաթողիկոսական ընտրություններին մասնակցելու եկած պատվիրակների հետ ունեցած հանդիպումների ժամանակ ծն-

վում է Ամենայն Յայոց Յայրապետի արտասահմանյան ուղեւորությունների միտքը՝ որպես Մայր Աթոռի եւ արտասահմանյան թեմերի միջեւ կապող, ամրապնդող առաքելություն (Ամենայն Յայոց Կաթողիկոս Տեր Տեր Վազգեն Առաջինի ուղեւորությունները, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 1956, էջ 13)։

Հովվապետական այցելությունները խոստանում էին Սփյուռքի հայության համար աննախադեպ երեւոյթներ դառնալ։ Սովետական իշխանությունները չխոչընդոտեցին, ավելին. սատարեցին Կաթողիկոսին։ Նրանք խնդրի ունեին սփյուռքահայությանը ցույց տալ իրենց «դեմոկրատական» մոտեցումները՝ այսպիսով ամրացնելով դիրքեր նաեւ Սփյուռքում, քանի որ ծայրաստիճան թուլացել էին Էջմիածնի ու թեմերի միջեւ կապերը, դրանք «հասել էին պայթյունի աստիճանին»։

Սակայն Վեհափառն իր առջեւ այլ խնդիր էր դրել՝ վերականգնել, վերակենդանացնել Յայ Առաքելական Եկեղեցու հանդեպ հավատը, մեկ միասնական դաշտում համախմբել պատմականորեն ձեւավորված Սփյուռքի եւ տեղացի հավատացյալի հոգեւոր ամբողջականությունը։ Նրա աճող հեղինակությունը լարված սպասման մեջ էր պահում Կաթողիկոսին հանդիպելու հույս փայփայող սփյուռքահայությանը։

Սփյուռքից Յայաստան ժամանած հայերից շատերի համար Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ուխտատեղի էր. գալիս էին՝ հատկապես Վեհափառին տեսնելու ուխտով։

Նման իրավիճակում հովվապետական ուղեւորությունները չէին կարող խոր եւ անմոռանալի տպավորություններ չթողնել նաեւ արտասահմանում բնակվող հայերի վրա, որոնք սահմանափակ շփում ունեին Մայր հայրենիքի հետ։

Ս. Էջմիածնում բարենորոգումների եւ շինարարական աշխատանքների համար եղած նյութական սուղ միջոցներն ամեն ուղեւորությունից հետո ավելանում էին նվիրատվությունների շնորհիվ՝ հնարավորություններ ստեղծելով իրականություն դարձնելու Վեհափառի եկեղեցաշեն երա-

զանքը (մանրամասն տե՛ս Սահակ ավ. քին. Շաքարյանի հոդվածը, «Արեւ» քաղ. գրական եւ տնտեսական օրաթերթ, ԾԱ տարի, թիվ 14.283, հիւնգաթի, 25 նոյեմբեր, Եգիպտոս, 1965)։

Օր օրի ոտքի էին կանգնում խոնարհված 100-ավոր եկեղեցիներ, կառուցվում էին աղբյուրներ, հուշակոթողներ, օտարության մեջ գտնվող պանդուխտների նման տուն էին վերադառնում մատյաններ ու այլ արժեքավոր մասունքներ։

Արտասահմանյան առաջին ուղեւորությունները տեղի ունեցան 1956-ի փետրվար-մարտ ամիսներին՝ Անթիլիաս, Կահիրե, Ալեքսանդրիա, Միլան, Վենետիկ, Փարիզ, Լիոն, Մարսել, Լոնդոն, Մանչեստր։ Կաթողիկոսին ամենուր դիմավորում էին բազմահազար հայեր՝ արցունքով, ուրախությամբ, նրա խոսքը լսելու մեծ ցանկությամբ։

Ժամանակի քաղաքական կնճիռները, ի վերջո, իրենց դերակատարությունն ունեցան Վեհափառի գահակալության տարիներին, կենտրոնախույս, միեւնոյն ժամանակ՝ հակակառնական երեւոյթներ էլ ի հայտ բերեցին, որոնք մեծ դառնություն պատճառեցին նրան։

Անթիլիասի կլիիկյան Աթոռը, առաջնորդվելով «Էջմիածինը Յայաստանի համար, իսկ Անթիլիասը՝ արտասահմանի» կարգախոսով, հակադրվեց Էջմիածնին՝ փորձելով անկախ ու ինքնիշխան գործունեություն ծավալել՝ որպես առանձին կաթողիկոսություն։ Խմորումներն սկսվել էին դեռնու Յայաստանի առաջին հանրապետության անկման տարիներից, դրանք ոչ միայն չէին հանդարտվում, այլեւ շարունակվում էին՝ իրենց ծիրի մեջ առնելով արտասահմանյան մի շարք թեմերի եւ։

Դեռ 1937 թ. «Վեմ» պարբերականը կասկած էր հայտնել Մայր Աթոռի՝ Էջմիածնում գտնվելու ապահովության հարցում՝ չկատախելով խորհրդային իշխանությանը եւ առաջարկելով կաթողիկոսական կենտրոնն արտասահման տեղափոխել (Վեմ, ապրիլ-հունիս, Փարիզ, 1937, «Ինչպե՞ս կարելի է պահել Յայ Եկեղեցու միասնականութիւնը»)։



Վազգեն Վեհափառի օրոքը եւս խնդիրը քննարկվում էր արտասահմանյան թեմերում, որոշ դեպքերում դառնում լուրջ խմորումների եւ պառակտումների առարկա։ Անթիլիասի կաթողիկոսական ընտրությունները երիտասարդ Վեհափառի համար կարեւոր իրողություններ հասկանալու ցավալի դասեր էին. Անթիլիասի կնճիռն այդպես էլ մնաց չուծված։

Թողնելով թեման պատմաբանների հատուկ ուսումնասիրությանը՝ նկատենք, որ Վազգեն Առաջին Կաթողիկոսն ստեղծված իրավիճակը շտկելու բազմաթիվ փորձեր է արել իր գահակալության տարիների տարբեր փուլերում։

1962-ին Նորին Սրբության համառ ջանքերի արդյունքում Յայ Առաքելական Եկեղեցին դառնում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ, Էկումենիկ առավել սերտ շփումներ են սկսվում կրոնական տարբեր կենտրոնների, Կաթողիկ եւ Ավետարանչական Եկեղեցիների միջեւ։ Վեհափառի աչքից չեն վրիպում նաեւ ներքին թեմերի կյանքը կազմակերպելու ընթացքում առաջացած խնդիրներն ու դժվարությունները։

Հովվապետական 22 այցելությունները բարեփոխում են նաեւ ներքին թեմերի մթնոլորտը, ունենում իրենց կրոնադաստիարակչական բացառիկ ազդեցությունը թեմերի կյանքում։

*Շարունակելի
Լուսինե ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մանկավարժական գիտ. թեկնածու*



Սկզբը՝ թիվ 2, 4-5

1922-ի նոյեմբերին՝ մինչև քեմալականների կողմից Կ. Պոլսի գրավումը (22-ին), Թեքեյանը հեռանում է Բուլղարիա (Վառնա), ուր մնում է երեք ամիս: Սկսում է աշխատակցել «Հայաստանի կոչնակին», որը լույս էր տեսնում ԱՄՆ-ում: Բուլղարիայից Ա. Չոպանյանին ուղղված՝ 1923 թ. հունվարի 18 թվակիր (երկարատե բանակցություններից հետո)՝ 1923 թ. հուլիսի 24-ին է ստորագրվել *Լոզանի կոնֆերանսի դաշնագիրը, որն ի չիք դարձրեց Սեւրի հայանպաստ որոշումները*) նամակում Թեքեյանը գրում է. «Լոզանը կ'երեւի թե բոլորովին թաղեց մեր խնդիրը, եթե նոյն իսկ պզտիկ ճեղք մը բաց թողուած է... պետք չէ, որ ատուվ ինքզինքնիս իսրեւր...» (էջ 220): Թեքեյանն այնուհետև գրում է, որ պետք է լրջորեն մտածել մեր անելիքների մասին, «որ ամեն պարագայի մէջ՝ չի կոտար միևնույն հիմա մեր քրածին նմանը ըլլալ», որը նշանակում էր ծավալել գործունեության բոլորովին նոր մոտեցումներ եւ նոր վերաբերմունք թե՛ ազգային եւ թե՛ կուսակցական ասպարեզներում:

Թեքեյանը 1923-ի մարտին անցնում է Հունաստան (Աթենք, ապա՝ Գորֆու)՝ հայ որբերի վիճակով զբաղվելու համար, հա-

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՋ ԱՌԿԱԽ ՄԻ ԿՅԱՆՔ

Նվիրվում է Վահագն Թեֆեյանի ծննդյան 140-ամյակին

մագործակցում որբանոցում որպես ուսուցիչներ աշխատող Թեոդիկի, Չիֆթե Սառաֆի, Արշ. Ալպոյաճյանի եւ այլոց հետ: Փարիզի ազգային պատվիրակության նորընտիր նախագահ Գաբրիել Նորատունկյանի հանձնարարությամբ մասնակցում է «Հայ որբերի պաշտպանության ընկերության» հիմնմանը, փորձում դպրոց բացել, մի քանի հայ որբերի ուղարկում է Եվրոպա՝ ուսանելու, նրա ջանքերով հայ ընտանիքներն սկսում են ապաստան տալ տասնյակ գաղթականների ու որբերի, ստեղծում է օգնության դրամագլուխ: Թեքեյանն այստեղ վերջնականապես համոզվում է, որ ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական որբանպաստ կազմակերպություններն անում են ամեն ինչ՝ հայ մանուկներին ծուլման ենթարկելու համար: Աթենքից Ա. Չոպանյանին հասցեագրված մի նամակում Թեքեյանը գրում է, «... պիտի փճանաս (որբերը - Ա. Ա.) ամերիկացուց ճեղքը», հայտնում այն միտքը, որ եթե ազգը «... այսօր իր որբերը իբրեւ հայ չհոգայ եւ չկրթէ, ազգը վաղը ինքը որբ պիտի մնայ...» (էջ 224-225): Ամռանը (հուլիսին) Թեքեյանը մեկնում է Եգիպտոս, կուսակցական հարցերով այցելում Լիբանան, Սիրիա, ապա անցնում Ֆրանսիա (Մարսել, Փարիզ): Փարիզում թեեւ Թեքեյանը շարունակում է ստեղծագործել ու զբաղվել կուսակցական-հասարակական գործերով եւ գաղթականների հարցերով, սակայն ամուրի ու միայնակ մարդու՝ նրա վարած 45 տարիներն արդեն իրենց գզալ էին տալիս ու նրան մղում հուսահատության գիրկը: Ինչպես ինքն է վկայում, ամեն բանից իր մեջ «տխրութիւն միայն դիզւեր էր»: 1923-ի դեկտեմբերին 2. Սյուրմեյանին ուղղված նամակում նա

գրում է. «... գիտեմ, թե ինչ բան գիս կրնար փրկել եւ գիտեմ նաեւ, թե այդ բանը պիտի չունենամ երբեք» (էջ 252): Շարունակելով խոսել իր հոգեկան ծանր կացության մասին՝ նույն նամակում գրում է. «Տարօրինակ բան. միտքս միշտ հստակ է ու առույգ, երբ սիրտս կը մոռնամ, բայց սիրտս հետզհետեւ արեւի քիչ կրնամ մոռնալ եւ ընկճումի ամբողջ օրեր ունիմ...» (էջ 253): Թեքեյան - Սյուրմեյան հոգեւոր հարադատության դրսևորումներից մեկն էլ դառնում է Թեքեյանի հովանավորությամբ, խմբագրությամբ ու առաջաբանով 1924-ին Փարիզում լույս տեսած՝ 2. Սյուրմեյանի «Լոյս Չուարթ» բանաստեղծությունների գրքույկը:

1924-ի դեկտեմբերին Թեքեյանը նորից է մեկնում Եգիպտոս (Կահիրե), ծանոթ շրջանակներից հրավեր ստանում տեղափոխվել Հայաստան (նույնանման հրավեր նա ստանալու էր նաեւ 30-ական թվականների կեսերին՝ Չապել Եսայանից), անգամ պատրաստվում է մեկնել, սակայն «Արեւի» խմբագրապետության հրավիրվելու եւ այլ պատճառներով հրաժարվում է այդ մտադրությունից:

Կահիրեում գործող Ազգային քաղաքական ժողովի ատենապետի պաշտոնում երկու տարի (1924-26 թթ.) աշխատելուց հետո Թեքեյանը ութ տարի ընդմիջումից հետո նորից է ստանձնում «Արեւի» խմբագրապետությունը, զբաղվում «Կարապետ Մելքոյան» հիմնադրամի նվիրատվությունը Կ. Պոլսի պատրիարքարանից Հայ բարեգործական ընկերությանը փոխանցելու եւ նույն միությանը փոխանցված գործատունը վաճառելու գործերով, զուգահեռ ստեղծագործում, «Հայաստանի կոչնակ» թերթի խմբագիր Հովհ. Ավագյանին պատրաստակամու-

թյուն հայտնում թերթին ուղարկելու արձակ գրություններ, քրոնիկներ ու գրականությամբ վերաբերող այլ նյութեր: 1924-ի աշնանը Թեքեյանը մեկնում է ժնեւ, մասնակցում Հայաստանի միջազգային լիգայի եւ Հայոց խորհրդակցական համաժողովի աշխատանքներին, ուր նաեւ քննարկվում են 50 հազար գաղթականների՝ Հայաստան փոխադրման, հայերի նկատմամբ աշխարհում նպաստավոր կարծիք ստեղծելու, հայոց դեմ վերջին տարիներին կատարված ողբերգական դեպքերի վերհանման եւ գաղթահայության ծուլման դեմն ամենելու հարցերը: 1925-ին Կ. Պոլսում 86 տարեկանում մահանում է Թեքեյանի մայրը՝ Եղիսաբեթը, որ նշանակում էր, թե տարագիր բանաստեղծը որբանում էր արդեն վերջնականապես (նրա ընտանիքի բոլոր անդամները՝ եղբայրները, քույրը, արդեն մահացել էին):

Թեքեյանն իր ողջ կյանքի ընթացքում երազել է ժամանակ ունենալ «բանաստեղծութիւն, ուսումնասիրութիւն եւ վէպ գրելու», բայց հնարավորություններ այդպես էլ կյանքը նրան քիչ տվեց: 2. Սյուրմեյանին գրած 1925 թ. սեպտեմբերյան նամակում նա գանգատվում է իր այդ ծանր կյանքից ու մանավանդ կատարած աշխատանքներից. «... ապուշ կեանք մը կապրիմ. աշխատութիւնը զոր կը կատարեմ, չեմ սիրեր... տարիները կանցնին... այլեւս երկար ապագայ մը չունիմ դիմաց... հիմա է ճշդիւ, որ պիտի կրնայի բան մը տալ, թողուլ ինձմէ...» (էջ 297-98): 1926-ին Թեքեյանը «խոշոր հատոր մը կազմելու չափ» հավաքած նյութեր ուներ, որոնք, սակայն, ընթերցողին ներկայացնելու հնարավորություն չունեցավ:

Շարունակությունը՝ էջ 8

Սկզբը՝ էջ 3

Հանգանակ Նիկիական (Symbolum Nicaenum)

«Հաւատամք ի մի Աստուած, [ի Հայրն] (լրացնում եմ ըստ հունարեն բնագրի) յամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի՝ աներեւոյթ եւ երեւելի արարածոց: Եւ ի մի Տեր Յիսուս Զրիստոս՝ Որդի Աստուծոյ միածին, այսինքն է ի գօրութենէ Զօր, որով ամենայն ինչ եղեւ: Աստուած որ յԱստուծոյ, լոյսն որ ի լուսոյ անտի է ծնեալ, ոչ եղեալ: Միագօր Զօր. որ վասն մարդկան Է՛ջ եւ մարմին զգեցաւ. չարչարեցաւ, յերիր յաւուր յարեաւ եւ եւ յերկինս, եւ գայ միսանգամ դատել զմեռեալս եւ զկենդանիս: Եւ յՈգին սուրբ կենդանի»:

Այնուհետև կցվել է բանադրանքի բանաձեւը.

«Այլ որ ասենն, թե եր երբեմն՝ զի չէր իսկ, եւ յառաջ քան զծնունդն զի չէր իսկ, եւ ի չեութենէ իսկ եղել, եւ յայլմէ իմեմնէ գօրութենէ կամ ի գոյութենէ, կամ անցանելով է կամ եղծանելով է, զայնպիսիս նգովեմք» (325 թ. ընդունված բուն Նիկիական հանգանակը նախընծայված է Եվագրիոս Պոնտացու մեկնության բնագրին: Սրբոյ Զօրն Եւագրի Պոնտացույ վարք եւ մատենագրութիւնը, Վենետիկ 1907 (ՌՅԾԶ), էջ 134-136):

Ընդունված Նիկիական հանգանակն ուղղված էր Հիսուսի աստվածային ծագումը մերժող բոլոր հերձվածողների՝ Արիոսի, Սաբելիոսի, Փոտինոսի, մանիքեացվոց, մարկիոնացվոց եւ այլոց դեմ. «որք յարեան ի վերայ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցւոյ, զորս դատապարտեցին ի Նիկիայ քաղաքի իբրեւ ժողովեալ էին եպիսկոպոսք 3ԺԸ (318)» (Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 133):

Իրենց հերթին, երեւելի քրիս-

ՎԻԵՆՆԱԿՅԻ ԵՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԻՈՒԹԱՐՅԱՆ ՂԱՅՐԵՐ ՂՈՎՍԵԾ ԳԱԹԸՐՃՅԱՆԸ ԵՎ ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳԻՍՅԱՆԸ...



տոնյա վարդապետներ Հիպոդիոտոս Բոստրացին (III դ.), Գրիգոր Աստվածաբան Նագիանգացին (IV դ.), ինչպես եւ Հայոց կաթողիկոս Սահակ Պարթեւը (V դ.) առանձին բանաձեւերով դատապարտեցին հրեական միաստվածությունը եւ պաշտպանեցին Նիկիական հանգանակով հաստատված Սուրբ Երրորդությունը՝ որպես քրիստոնյաների եռանձնյա միասնական աստվածություն: Դրանով իսկ նրանք հստակ փորձում էին աներկբա սահմանազատել քրիստոնեությունը հուդաիզմից - այս «Judaism» բառը գործածված է հիշյալ բանաձեւերի հունարեն եւ լատիներեն բնագրերում, որոնց փոխարեն հայերեն հին գրաբար

թարգմանություններում առկա են «հրեականութիւն», «հրեաբար» բառերը:

Սահակ Պարթեւ կաթողիկոսը V դարի սկզբին Գրիգոր Լուսավորչի Վարդապետության եւ Ագաթանգեղոսի Պատմության վերջում առկա 20 հավատամքների հիման վրա Լուսավորչական Եկեղեցու մեջ մտնող Վրաց թեմի համար իբրեւ ուղեցույց կազմեց «Վասն հաւատոյ» կոչված մի մեկնություն, որի VIII-ի 1 կետում, առանց իր աղբյուրը հիշատակելու, քաղել է, մեր համոզմամբ, Հռոմի եպիսկոպոս Հիպոդիոտոս Բոստրացու «Ի Սուրբ Երրորդութիւն. հարցումն եւ պատասխանի» երկխոսությունից հետեւյալ հատվածը (21-26).

«- Վասն բնա՞ւ Երրորդութեանն եթէ ասին երեք Աստուածք:

- 2ի Աստուած Հայր կատարեալ է եւ Որդի Աստուած բովանդակ է եւ Սուրբ Հոգին Աստուած բաւական. Այս գրեալ է իսկ յարեւս եւ ի մարգարես եւ ի Նոր Կտակարանս:

- Բայց եթէ ընդէ՞ր երեք աստուածք չասացին, այլ մի աստուածութիւն, եւ խնդրելի է:

- Չասին երեք Աստուած, քանզի ո՛չ եթէ այլեայլութիւն:

- Չասի դարձեալ եւ միութիւն, զի մի՞ ի հրեական եւ ի Սաբելի միտն անկանիցիք:

- Հաւատամք յերեքանձնեայ Երրորդութիւնն, եւ չասեմք երիս աստուածս, զի մի՞ հեթանոսաբար բազմաստուածք լիցիմք» (Կնիք հաւատոյ ընդհանուր Սուրբ Եկեղեցւոյ, յՈղորդփառ եւ Ս. Հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց. յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ: Հրատարակութիւն Կարապետ Եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, տպարան Մայր Աթոռոյ, 1914, էջ 9):

Հիպոդիոտոս Բոստրացուց քաղված այս երկխոսությունն է պատճառը, որ վրացերեն Շատբերդյան ձեռագիր ժողովածուում Սահակ Պարթեւի հեղինակած «Վասն հաւատոյ» ամբողջական մեկնությունը վերագրված է եղել Հիպոդիոտոսին (Այս մասին մանրամասն տե՛ս իմ ուսումնասիրությունը՝ Ագաթանգեղոսի Հայոց Պատմությունը եւ հին վրացերեն «Վասն հաւատոյ» դավանաբանական երկը, ԳԱՎ «Լրաբեր հասարակական գիտությունների»,

1987, համար 4, էջ 62-81): Այդ վրացերեն մեկնությունը Շատբերդյան ժողովածուից լատիներեն թարգմանեց եւ 1965 թվին մանրամասն ուսումնասիրությամբ հրատարակեց քրիստոնյա Արեւելքի մատենագրական հուշարձանների հմուտ հետազոտող, բելգիացի նշանավոր արեւելագետ ժերար Գարիտոնը (G. Garitte, Le Traite georgien «Sur la foi» Attribue a Hippolyte, «Le Muséon», T. LXXVIII, 1-2, Louvain, 1965, p. 126-164):

Հիպոդիոտոս Բոստրացու երկխոսության համապատասխան հատվածը Գարիտոսի լատիներեն թարգմանությունից արեւելահայ աշխարհաբարով մեջբերված է Պարույր Մուրադյանի հին վրացերեն «Վասն հաւատոյ» մեկնության հայերեն թարգմանության մեջ՝ VIII, 1. «Տեսնո՞ւմ ես ճշմարիտ միությունն ու Երրորդությունը: Եվ ոչ թե առանձին-առանձին աստվածներ ենք ասում՝ երեք Աստված չեն կոչվում, որովհետեւ այլ եւ այլ էության չեն: Չի կոչվում նաեւ միայն մեկ, որպեսզի հրեության ու սաբեղիանոսների կարծածին չհակվենք. այլեւ հավատում ենք ինքյան Երրորդության, միությամբ կատարյալ: Եվ չենք ասում երեք Աստված, որպեսզի չնմանվենք հեթանոսներին, ուրոնք բազմաստված են կոչվում» (Պ. Մուրադյան, Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները, Եր., 1982, էջ 91):

Շարունակելի
Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ԱՆԴՈՒՆԴԻ ԵՎ ԵՐԿՆՔԻ ՄԵՑ ԱՌԿԱԽ ՄԻ ԿՅԱՆՔ

Սկզբը՝ էջ 7

Ու չնայած իր այդ վիճակին՝ Թեքեյանն ուշադիր էր իր շրջապատի մարդկանց նկատմամբ, հոգատար՝ մանավանդ իր գր-
չեղբայրների հարցերում: Մ. Կյուրճյանին գրած մի նամակ ցույց է տալիս, թե ինչ սր-
տի ցավով է նա տարել Եր. Օտյանի առող-
ջության վատթարացումը եւ թե ինչպես նա քանիցս այցելել է Կահիրեի իտալա-
կան հիվանդանոց, ուր պառկած էր մեծ եր-
գիծաբանը, բժիշկներին հանդիմանել ցու-
ցաբերվող պակաս ուշադրության համար (Եր. Օտյանը մահացել է 1926 թ. հոկտեմ-
բերի 3-ին: Օտյանի թելադրությամբ Թեքե-
յանն է գրել նրա կտակը): Այս ընթացքում Թեքեյանն իր աշակցությունն է նաեւ ցու-
ցաբերում 1926 թ. Հայաստանում տեղի ու-
նեցած երկրաշարժից տուժածներին:

Այս ամենով հանդերձ՝ Թեքեյանն ստեղ-
ծագործական առումով եւս աշխատում է իր ուժերի ողջ լարումով, որի մասին նա վկայում է 1927 թ. գրած իր նամակներից մեկում. «... առտուրն է մինչեւ իրիկուն գրի-
չը ձեռքս, եւ քրտինքը կռակս է»: Ահռելի հուսահատության եւ տնտեսական ծանր պայմաններում նա շարունակում է գրել ոչ միայն բանաստեղծություններ, այլեւ հոդ-
վածներ, նամակներ, արձակ գործեր, գա-
նազան գրություններ, քանի որ չգրել չէր

կարող եւ գրելով դիմակայում էր իր տառա-
պանքներին. «Չարմանալի է միայն, որ բնութեամբ կամ սովորութեամբ, գրելու պահուս կը հակազդեմ այդ զգացումներուն եւ լրջօրէն, հաւատքով կը գրեմ» (էջ 303):

1927-ին Թեքեյանն ստանում է բարերար Պողոս Գեորգյանի առաջարկը՝ իր նոր գրքի տպագրությանն օգնելու վերաբերյալ: Բայց քանի որ, Թեքեյանի խոսքերով ասած, «Ե-
գիպտոսը տարօրինակ երկիր մըն է, մարդ ուզածը չէ, որ կ'ընէ, այլ միշտ՝ չուզածը», ինչպես այս, այնպես էլ ուրիշ գործեր եւս չեն իրականանում: Իր ծանր կացության մասին Թեքեյանը շատ ավելի դառնացած է գրում Կ. Չարյանին ուղղված՝ 1929 թ. հուն-
վարի 9 թվակիր նամակում. «Ի՛նչ գրեմ, ինչպե՛ս գրեմ, «կլանուած եմ» այն հրէշէն, որ հայ եւ եգիպտահայ journalisme-ն է: Ո՛չ ժամանակ, ո՛չ ախորժակ կը մնայ ուրիշ բան ընելու, ուրիշ բանի վրայ մտածելու անգամ: ... այնքան փճացած տրամադրու-
թեամբ գրիչը ձեռք կ'առնեմ կեսօրէ վերջե-
րը եւ, ամէն մեղքիս վրայ, գոնէ հանգիստ եւ առանձին ալ չեմ մնար գրածս միջոցին: Աշ-
խատանքս («Արեւ»-ում - Ա. Ա.) եւ կեանքս միասին ereintement (հատնում) է եւ ուրիշ ո-
չինչ: Միջավայր չկայ, մարդ չկայ, եւ ի փո-
խարէն փիս կորի եւ ապուշ յոգնութիւն կայ միայն» (էջ 544-545):

Թեքեյանի կյանքում ոչինչ չի փոխվում նաեւ հաջորդ տարի: Շրջապատի ան-
տարբերությունը շարունակվում է նրա նկատմամբ, նրան դառնություններ պատ-
ճառում, հարձակումներ է գործում մանա-
վանդ «Պայքար» թերթը: Գրողը մի կարճ ժամանակով այցելում է Փարիզ եւ վերա-
դառնում:

Հաջորդ տարի եւս մեկնում է Փարիզ՝ հույս ունենալով ձերբագատվել լարված մթնոլորտից եւ շատ թե քիչ հարմար աշ-
խատանք գտնել: Գրեթե դադարում է ստեղծագործելուց, ունենում է անկման օ-
րեր, հիասթափությունը շարունակվում է: Վատանում է նաեւ առողջությունը: Ոչինչ չանելու ցանկությունը տիրապետող է դառնում. «... հիւանդութեանս ծանրութիւ-
նը ատկէ կը հասկնամ: ... ես ինքզինքես զգուած եմ...», գրել է նա 1930 թ. Ա. Տա-
րյանին ուղղված իր նամակում (էջ 315): Անբաժան գրկանքները նրա մեջ ծնում են անսովոր զգացողություններ. «... զգացու-
թիւնը ունիմ ծովուն մէջտեղ ժայռի մը վրայ ելած նաւաբեկեալի մը, որ ծովը նե-
տուելով խեղդուելու կամ իր ժայռին վրա սովամահ ըլլալու անխուսափելի հար-
կադրանքին կը խորհի...» (էջ 317):

Գրողի անկումային տրամադրություննե-
րը լավ է բնորոշվում այս շրջանում Թեքե-



յանի գրած «սակաւաթիվ բանաստեղծու-
թիւններից» մեկի առիթով Ա. Տաւրյանի՝ Թեքեյանի բանաստեղծության մեջ օգտա-
գործված «փափուկ» բառի փոխարեն «ծիծղուն»-ը օգտագործելու առաջարկին Թեքեյանի տված պատասխանով. «Լաւ է,-
գրել է Թեքեյանը,- բայց «ծիծղունը» իմ զգացումիս մէջ չէ» (էջ 320): Այս ընթաց-
քում հանդիպումներ է ունենում Փարիզում գտնվող Ավ. Իսահակյանի հետ, անգամ հղանում են գրական ընկերություն հիմնել:

Շարունակելի
Արծրուն ՄԱՍՏՐԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԻԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՒՅԱՆ (1809-1848)

Սկզբը՝ էջ 6

Ձանումս ջան չի մնաց, որ իմ ահվալն
քեզ ասեմ.
Բերանս խոսք չէ գալիս, որ իմ խիալն
քեզ ասեմ.

Թոփ ու թոփխանա ես սարքել,
քանդեցիր բուրձ ու բաղանքս,-
Յարի պես քիամ եկար, կերար, մաշեցիր
իմ ջանքս,
Դարդիմանդ ես մի ֆիքր արա՝ ինչպես
ըլի ես իմ բանքս,
Ոչովեմեն ումուդ չունիմ, դուն ես իմ
ճարն ու դարմանքս,
Թե ուզում ես դիփունիմեն դուն ըլես իմ
սերն ու սանքս,
Յարա քյար տո՛ւր ես բանին,
որ իմանամ՝ լավիցն ասեմ:

Փորձենք համեմատել սայաթնոյան թե-
կուզ «Մէ խոսկ ունիմ» տաղը եւ կիսմոզ-
վենք երկու հեղինակների տրամադրու-
թյունների ու զգացմունքների ընդհանրու-
թյան մեջ: Ու թեեւ Սայաթ-Նովայի խաղերի
«Դավթարը» բժիշկ եւ բանասեր Գեորգ Ախ-
վերդյանը հրատարակել է տասնամյակներ
հետո՝ 1852 թ., երբ արդեն ողջ չէր Աբո-
վյանն ու չէր կարող տեսած կամ ընթերցած
լինել, բայց նրա թիֆլիսյան առաջին շրջա-
նում՝ 1822-ից մինչեւ 1829 թիվը, շուրջ յոթ
տարի, հայահոծ թիֆլիսյան միջավայրում
պատանի Աբովյանը մեջլիսներում, հարսա-
նիքներում ու այլ տոնախմբություններում
ժողովրդական երգիչներից ու թափառիկ
աշուղներից հաճախ պիտի լսած լիներ սա-
յաթնոյան երգերը, որոնցից էլ ազդվել է
նա: Այլապես անկարելի պիտի լիներ սիրո
վշտի ու տառապանքի ընդհանրության, «ո-
չովեն ումուդ չունիմ, դու ես իմ ճարն ու
դարմանս» (Աբովյան) եւ «Էլ չունիմ օջով,
ա՛ջքի լուս» (Սայաթ-Նովա) արտահայտու-
թյունների ակնհայտ նմանությունը:

Հետաքրքիր է, որ այս բանաստեղծու-
թյունը գրվելուց տարիներ անց՝ 1834 թ.,
կարեւորել է Աբովյանն ինքը՝ Պետերբուր-
գում պատահաբար հանդիպած Եգնակ
Կամսարական անունով իր մի ընկերոջ
խնդրանքով 12 տնից 4-ը հիշողությամբ
վերարտադրելով եւ նրան նվիրելով:

Խ. Առվյանի վաղ շրջանում գրած սիրա-
յին բանաստեղծությունները, սակայն, դե-
ռես մարդկային անկեղծ զգացմունքների
բարձրարվեստ արտահայտություններ
չեն, այլ վերացական նմանակումներ, ո-
րոնց մեջ դժվար է գտնել գեղարվեստա-
կան լուրջ արժեք: Սրանց կողքին առկա են
կլասիցիզմի ոգով ու ոճով գրված հայրե-



նասիրական գրաբար բանաստեղծու-
թյուններ, որոնք նաեւ ժամանակի թելադ-
րանքն են: Այդպիսիք են՝ «Կարօտութիւն
նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց»,
«Խնդամուր զգացմունք երախտագետ Հայ-
կազին յազատութիւն հայրենեաց իւրոց»,
«Մուտ Հայկա ի Հայաստան» եւ այլն: Այս
բանաստեղծություններում Աբովյանը կի-
րառել է հորենացու, Նարեկացու, Շնորհա-
լու եւ միջնադարյան այլ ողբերից եկող հա-
կադրության արտահայտչական եղանա-
կը: Հակադրվում են Հայաստանի հեռավոր
փառքի ու վայելչության ժամանակները
19-րդ դ. առաջին տասնամյակների հայ
կյանքին, նախնիների փառավոր անցյալի
կարոտի ու վերհուշի եւ ներկայի տխուր,
ողբերգական իրականության տարբերու-
թյունների հակադրությամբ՝ հեղինակն
ընդգծում է կորստյան ցավը, արթնացնում
կորցրածը վերականգնելու հույսեր ու ձգ-
տումներ: Երբեմն էլ անցյալի տխուր հուշե-
րին, ողբ ու լացին հակադրվում է Արարա-
տյան Հայաստանի պարսկական լծից
ռուսների օգնությամբ ազատագրված նոր
սերնդի «խնդամիտ զգացմունքը»:

Հակադրության այս հնարանը հետա-
գայում հաջողությամբ կիրառել են Ղ. Ալի-
շանը, Ռ. Պատկանյանը, Ե. Զարեցը, Յ.
Շիրազը եւ ուրիշներ:

Հայկական կլասիցիզմի բանաստեղծնե-
րի նախասիրած ժանրերից մեկը ձոներգն
էր, որ վաղ շրջանում կիրառել է նաեւ Աբո-
վյանը՝ ձոներգ-ներբողներ նվիրելով ժա-
մանակի ռազմաքաղաքական, հոգեւոր
նշանավոր գործիչներին ու իր ուսուցիչնե-

րին. Արեւելյան Հայաստանի՝ պարսկա-
կան տիրապետությունից ազատագրման
առթիվ Նիկոլայ ցարին, կոմս Պասկեւիչին,
Ներսէս Աշտարակեցուն, Կարապետ Բագ-
րատունուն, ինչպես նաեւ իր ուսուցիչներ
Աստոն Մուղնեցուն, Հարություն Ալամդա-
րյանին եւ ուրիշներին: Հետաքրքիր է, որ Ա-
բովյանը, արդեն դորպատյան տարիներից
ի վեր, չի գրել միայն գրաբար կամ միայն
աշխարհաբար: Թվում է, թե գոնէ հետդոր-
պատյան տարիներին, մանավանդ հռչա-
կավոր «Վերջ Հայաստանի» վեպը գրելուց
հետ «Խ. Աբովյանն այլեւս գրաբարով չպի-
տի գրեր: Սակայն այդ տարիներին Խ. Ա-
բովյանը գրել է թե՛ աշխարհաբար, թե՛
գրաբար, ընդ որում՝ գրաբար բանաստեղ-
ծությունները գերակշռում են: Նշանակում
է՝ նա, աշխարհաբարի կողմնակից լինե-
լով, գրաբարի հանդեպ ունեցել է որոշակի
նպատակադրումներ, բայց ոչ երբեք այն
հերքելու կամ մոռանալու ցանկություն:

Հետագա ժամանակներում գրողի հա-
սունացման, աշխարհայացքի ընդլայնման
հետ միասին էական փոփոխություններ
է կրում Աբովյանի քնարերգությունը, դոր-
պատյան միջավայրում կլասիցիզմը տեղի
է տալիս սենտիմենտալիզմի եւ ռոման-
տիզմի առջեւ, սիրո եւ հայրենասիրական
երգերը ձեռք են բերում որակական նոր
հատկանիշներ, չափածո խոսքն ստանում
էր գեղարվեստական կշիռ ու արժեք: Հա-
րավկովկասցի ասիական դաստիարակու-
թյամբ երիտասարդին եվրոպական ըն-
տանիքների, բարեկիրթ կանանց եւ ուսա-
նողների հետ շփումները շատ բան տվե-
ցին: Այդ արմատական փոփոխություննե-
րը, մանավանդ կանանց դաստիարակիչ
դերը իրենց արձագանքն են գտել Աբովյա-
նի դորպատյան շրջանի սիրո բանաստեղ-
ծություններում: Կարելի է ասել՝ Դորպա-
տը հայտնաբերեց իսկական բանաստեղ-
ծին՝ նոր երանգներ, կերպ ու ձեւ տալով
նրա խոհերին ու զգացմունքներին: Կլասի-
ցիստական ձոներգերին ու եղերերգերին
փոխարինում են քնարական նոր ժանրա-
ծեւեր, որոնք տալիս էին ինքնարտահայտ-
ման նոր հնարավորություններ:

Ասիական զուսպ, իրենց կանացի հրա-
պույրները չարսավի ու երկարափեշ
զգեստների տակ թաքցրած չիտսկան կա-
նանց փոխարեն Աբովյանը շփվում էր ի-
րենց շնորհներով հրապուրող, զգաց-
մունքները ռոմանսներով ու գործիքային
երաժշտությամբ արտահայտող գեղեցկու-
հիների հետ: Այդպիսին է, օրինակ, «Օ-
րիորդ ֆոն Շվեքս ի վերայ երգեհոնի» բա-
նաստեղծությունը, որով Աբովյանն ար-
տահայտել է իր անմիջական զգացմունք-
ները երգեհոնահար գեղեցկուհու, նրա
նվագաժողովի ու երգի նկատմամբ.

Աչք քո յիս նայի,
եւ ես նուաղիմ,

Ձայնք քո յիս հնչի,
եւ ես շուաղիմ...

Մարդկային երջանկության արժեւոր-
ման խոր զգացումով նա բանաստեղծու-
թյուններից մեկում խոսում է մի սիրունա-
տես, սակայն գեր եւ կաղ օրիորդի մասին:
Բանաստեղծը մարդկայնորեն կարեկցում
է ամեն օր իր ճանապարհին հանդիպող
այս օրիորդին, որը բնական արատների
պատճառով զրկված է երջանիկ լինելու
հնարավորությունից: Խոր ցավ է ապրում
բանաստեղծը, որ բնությունից պատժված
է համակրելի օրիորդը. նա չի ունենալու
կյանքով իրեն նվիրված սիրած երիտա-
սարդ, նրա հրաշագեղ կրծքին չի խայտա-
լու իր երագած մանկիկը, եւ նրա այտերի
վարդն ու հասակի ծաղիկը թռչնելու են
անտիրական ու անխնամ: Բանաստեղծը
խորապես մարդկային մի աղերս ունի եր-
կնքին, որ նրան պարգեւի արժանի փեսա,
որ երկունս էլ երջանկանան միմյանցով:

Մի այլ բանաստեղծություն մեջ Աբովյանը
պատկերում է, թե ինչպես է ինքը զմայլվել
օրիորդ Է. Կայի հրաշալի նվագով («Ան օ-
րիորդ Էմ. Կա»): Դորպատյան սիրո երգե-
րում լավագույններից մեկը նվիրված է
Կարլ Գրասսի քրոջը՝ Շարլոտեին, որի հան-
դեպ Աբովյանը տածել է բուռն զգացմունք-
ներ: Թեեւ գրաբար՝ այս երկը սիրո զգաց-
մունքի խոր ընկալման ու բարձրարվեստ
վերարտադրման իմաստով ամենեւին չի
գիջում համաշխարհային քնարերգության
համաբնույթ հայտնի գործերին եւ անձնա-
կան քնարերգության առաջին դրսեւորում-
ներից է հայ նոր գրականության մեջ:

Շարունակելի
Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 3.04.2018թ.

Տպաքանակը՝ 2100

Գինը՝ 50 դրամ